

Ռոսթն

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ*

Բանալի բառեր – Արարատ, Իսաան Նուրի, Արտաշես Մուրադյան, Իբրահիմ Հրագե Թելլի (Բրո), Ռուբեն, Թեյմուրթաշ, բոլշևիկ, Իրան, Թուրքիա, Հոյբուն, ՀՅ Դաշնակցություն, Իգդիր, ապստամբություն, Զիլան բեյ, Վան, Բայազետ, Զաֆեր Դոուլե, բժիշկ Մանուկ:

Երկու խոսք

Շեյխ Սալիդի ապստամբությունից ուղիղ մեկ տարի անց՝ 1926 թվականին, Հայոց նվիրական Մասիս և Սիս լեռների շրջանում սկիզբ առած քրդական ջալալի ցեղային միության հետետորի ցեղի ընդվզումը կարճ ժամանակ անց վերածվեց մի հզոր ապստամբության, որին միացավ քրդերի մտավորական, հոգևոր, գինվորական և աշխարհիկ վերնախավը:

Իբրահիմ Հրագեի ղեկավարությամբ սկսված այդ ոչ մեծ շարժումը քրդական «Հոյբուն» կուսակցության և նրա դաշնակից Հայ Յեղափոխական Դաշնակցության ջանքերի շնորհիվ վերաճեց Արարատի ապստամբության: 1926–1927 թթ. ընթացքում ՀՅԴ-ն կատարեց մեծ ծավալի կազմակերպչական աշխատանք՝ քրդական ուժերը մեկ քաղաքական կազմակերպության՝ «Հոյբունի» մեջ միավորելու ու միմյանց թշնամի ցեղապետերին ու քաղաքական գործիչներին հաշտեցնելու համար: 1927 թ. հոկտեմբերին Լիբանանի Բրիտանիայի ամառանոցային ավանում մի քանի օր տևած խորհրդակցություններից ու բանակցություններից հետո երկու կուսակցությունները միավորեցին իրենց ջանքերը՝ թուրքական տիրապետության դեմ համատեղ պայքարում:

Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը թերի է ուսումնասիրված ինչպես համաշխարհային, այնպես էլ խորհրդային ու հատկապես հայ պատմագիտության կողմից: Դրա պատճառներից ամենագլխավորը սկզբնաղբյուրների պակասն է, ինչպես նաև օտարալեզու, հատկապես թուրքերեն և քրդերեն լեզուներով կատարված ուսումնասիրությունների հայերեն թարգմանությունների բացակայությունը: Այս բացթողումը մի փոքր լրացվել է վերջերս լույս տեսած մեր մենագրության մեջ¹, որում տեղ են

¹ Ընդունվել է տպագրության 14.06.2018

Տես **Արամ Ս. Սալիան**, Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համաձիգում, Եր., 2017:

ժ (ժ-Զ) փարի. թիվ 2 (62), ամբիլ-հունիս, 2018
վլվ համահայկական հանդես

գտել թուրք և քուրդ ուսումնասիրողների թուրքերեն աշխատություններից կատարված թարգմանություններ:

Սակայն Արարատի ապստամբության պատմության վերաբերյալ քրդական ու թուրքական ուսումնասիրությունների ու մանավանդ դրանց համար իբրև հիմք ծառայած սկզբնաղբյուրների հավաստիությունը շատ դեպքերում նույնպես կասկածելի է: Քրդական աղբյուրներում, ինչպես, օրինակ՝ ապստամբության ղեկավար Իհսան Նուրի փաշայի հուշերում² տեղ են գտել բավականին մեծ թվով ոչ ճիշտ տեղեկություններ և թվական տվյալներ, չափազանցվում է նրա անձնական դերակատարությունը ապստամբության որոշ դրվագներում, և ընդհակառակը՝ անտեսվում են հայերի և իրանական իշխանությունների կողմից ցուցաբերված օգնության մասին վկայող փաստերը:

Իսկ թուրքական սկզբնաղբյուրներում, որոնք հիմնականում պաշտոնական բնույթ ունեն, նվազեցվում է թուրքական բանակի գոհերի թվաքանակը, ռազմական ընդհարումների պատկերը ներկայացվում է քեմալական իշխանությունների համար նպաստավոր դիրքերից:

Ի տարբերություն վերը նշված երկու խումբ սկզբնաղբյուրների՝ Խորհրդային Միության Բանվորագյուղացիական Կարմիր բանակի (ԲԳԿԲ) հետախուզական զեկուցագրերն աչքի են ընկնում ավելի մեծ ճշգրտությամբ, սակայն դրանք ևս չեն ներկայացնում ապստամբության ամբողջական պատկերը և բացի այդ, խորհրդային ռազմաքաղաքական ղեկավարության միակողմանի քաղաքական դիրքորոշումից բխող հետևություններն էականորեն աղավաղել են պատմական իրականությունը, թույլ չեն տվել անկողմնակալ ուսումնասիրել և ներկայացնել նրա իրական պատկերը:

Այս ամենից շահեկանորեն տարբերվում է հայ ազատամարտի ականավոր գործիչ և Առաջին Հանրապետության ռազմական ու ներքին գործերի նախարար Ռուբենի (Մինաս Տեր-Մինասյան) ընդարձակ գրությունը: Հայաստանի անկախացումից հետո նրա ժառանգների կողմից Փարիզից՝ Երևան տեղափոխված և այժմ Հայաստանի Ազգային արխիվի 1048 ֆոնդի առաջին ցուցակի 64-րդ գործը կազմող «Քրդական գործը Պարսկաստանում» փաստաթուղթը դպրոցական տետրակի էջերում շարադրված 34 թերթից բաղկացած մի մանրամասն զեկուցագիր է, որն ուղղված է ՀՅ Դաշնակցության Բյուրոյին: Նրանում Ռուբենը խոսում է Արարատի ապստամբությանն աջակցություն ցուցաբերելու նպատակով Պարսկաստանում իրականացված իր գաղտնի առաքելության մասին:

1929 թ. նարտ-մայիս ամիսներին տեղի ունեցած ՀՅԴ XI Ընդհանուր ժողովը որոշում էր ընդունել Ռուբենին ուղարկել Իրան՝ Սադարակում Արտաշես Մուրադյանի ձերբակալումից հետո առաջ եկած խնդիրները հարթելու և իրանական իշխանությունների ու ՀՅԴ-ի համատեղ ջանքերով Արարատի ապստամբներին ցուցաբերվող օգնությունը շարունակելու համար: Ուստի Ռուբենը իր զեկուցագիր-հաշվետվությունը սկսել է 1929 թ. վերջերից, երբ կատարելով կուսակցության որոշումը՝ նա կեղծ անձնագրով ժամանում է Թեհրան և տեսակցություն խնդրում Իրանի պալատական նախարար Թեյմուրթաշից: Բանակցություններն ավարտվում են բարեհաջող և հայ-պարսկական զինակցությունն Արարատում նոր թափ է առնում՝ ստա-

² Stü İhsan Nuri, Ağrı Dağı İsyani, İstanbul, MED Yayıncılık, 1992.

նալով իրանական իշխանությունների գաղտնի աջակցությունը:

Ձեկուցագրում Ռուբենը մանրամասնորեն ներկայացնում է հայ-քուրդ-պարսկական համագործակցության հարցի վերաբերյալ Իրանում գործող դաշնակցականների և ՀՅԴ Բյուրոյի տեսակետների տարբերությունները, ինչպես նաև Թեյմուրթաշի հետ եղած բանակցությունների ընթացքում քննարկված առաջարկների բովանդակությունը:

Մանրամասնորեն շարադրված են նաև 1930 թ. գարնանը տեղի ունեցած իրադարձությունները՝ քրդական ցեղերին թուրքերի դեմ կազմակերպելու գործընթացը, մարտական գործողությունների ընթացքը, ինչպես նաև ապստամբության պարտությունը և դրանից հետո տեղի ունեցած ընդհարումներն Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում: Ակնհայտ է, որ շնորհիվ այս զեկուցագիր - հաշվետվության՝ բացահայտվում են բազմաթիվ անհայտ փաստեր, մասնավորապես ապստամբության պարտության հիմնական պատճառը՝ իրանական իշխանությունների նկատմամբ խորհրդային ղեկավարության իրականացրած բացահայտ ռազմաքաղաքական շանտաժը, որը դրսևորվեց խորհրդային գործերի՝ Իրան ներխուժելու տեսքով:

Այս ուշագրավ փաստաթուղթն ուսումնասիրելու և տպագրության նախապատրաստելու ընթացքում հանդիպել ենք բազմաթիվ դժվարությունների: Որոշ տեղերում Ռուբենի ձեռագիրն անընթեռնելի է, ինչի հետևանքով առաջ եկած բացերը առանձնացրել ենք ուղղանկյուն փակագծերով, որոնց մեջ դրված է [անընթ.] հապավումը: Հապճեպ գրելու պատճառով Ռուբենը զուգահեռաբար գործածել է և՛ արևմտահայերենին և՛ արևելահայ որոշ բարբառներին բնորոշ բառակապակցություններ, երբեմն էլ նույն բառը տարբեր էջերում գրված է տարբեր ուղղագրությամբ: Բայց չնայած շարադրանքի մեջ նկատվող անհարթություններին ու բարդ ձևակերպումներին, Ռուբենի զեկուցագիրը պարունակում է բազմաթիվ ուշագրավ դրույթներ, որոնք խիստ արդիական են նաև մեր օրերում՝ Թուրքիայում քրդական շարժման ծավալման պայմաններում Հայաստանի ու Իրանի քաղաքական դիրքորոշումները հստակեցնելու համար:

Ձեռագրի վերծանման գործում հեղինակին մեծապես օգնել է ՀՀ Ազգային արխիվի ընթերցասրահի աշխատակցուհի Վարդ Գրիգորյանը, որի համար նրան հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Արամ Ս. Սայիյան
Պատրմ. գիյր. թեկնածու

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

XI Ը.Ժ.-ի որոշումները

Նախքան բուն խնդրին անցնելը վերլիչելու է այն որոշումները, որ XI րոդդ ը. ժ.³ տուած է քրդական հարցի և Պարսկաստանի մասին (եզ. 20) N 2, անմիջապես կազմակերպել յեղափոխական միջոցներով Թուրքիան տնտեսապես և թուապես վնասելու գործը՝.

N 3. Գործակցել քրդական շարժմանը.

N 1. շարունակել մեր սերտ գործակցությունը քուրդ ազգային «Հոյբուն»⁴ կուսակցության հետ.

N 2 աշխատել միացնել Հոյբունը, քրդական հոսանքները ու անկախ աշիրեթները մեկ միություն մեջ հակաթուրք ընդհանուր պայքարի մեկ ճակատ ստեղծելու համար:

N 3. մինչ այդ ջանալ բարեկամական յարաբերություն մշակել Հոյբունեն դուրս գտնուող ուրիշ հոսանքներու և աշիրեթներու հետ ու գործակցել անոց հակաթուրք շարժումներուն, միաժամանակ մնալով բարեկամ և գործակից Հոյբունին:

N 4. Ստանձնել ի հարկին դրամական գոհողություններ, պայմանաւ, որ դրամների մեծագոյն մասը ծախսուի երկրի ներսը տեղի ունեցող շարժումների վրայ:

N 5. բացի դրամական աջակցությունէ, մասնակցել քրտական շարժման և ռազմական միջոցներով, այս գործի համար տրամադրելով մասնագետ ղեկավարների և ներմուծելով խմբեր:

N 6 – գործակցել քրտական շարժման այն պայմանով, որ այդ շարժումը ուղղւած ըլլայ միմիայն Թուրքիոյ դէմ առանց ծաւալելու Պարսկաստանի և Իրաքի սահմանների մէջ:

այս 8 կետերը լինելով ընդհանուր ժողովի որոշումները Քրտական հակաթուրք ճակատի մասին, առանց բացատրությունների պարզ և հասկանալի է, որ նա կիրահանգի ամեն միջոցով, ամեն ճանապարհով և ամեն տեսակ տարրերով, օգտագործել քրդական ըմբոստությունները, որ ուղղուած են Թուրքիոյ դէմ. միայն մի վերապահութեամբ որ նրանք չվնասեն և չծաւալեն Պարսկաստանի և Իրաքի սահմաններում: –

Աւելորդ չէ մեզ բերել և Պարսկաստանի մասին եղած որոշումները, որ կշեշտեն մեր վարքագիծը այդ երկրի հանդէպ.

« 1. ամեն կերպ ոյժ տալ այս ձեռնարկներուն, որ կամրապնդի հայ-պարսկական մերձեցումը:

աջակցել այն բոլոր պարսիկ հոսանքներուն, որ կնտածեն համաթրքական վտանգը և կպայքարեն անոր դէմ.

քրդական ազատագրական պայքարին մեջ միշտ կանգնել Պարսկաստանի հողային ամբողջականութեան տեսակետին վրայ.

Ստեղծել հայ-պարսիկ կոմիտէ մը, երկու ժողովուրդներու շահերու պաշտպանութեան համար»:

Այս երկու բանաձևերը տեսականորեն ճիշտ և անթերի պիտի համարել եթէ որդեգրուած լինէր ոչ միայն մեր այլև քրդերի և պարսիկների կողմից. Այս երկու բանաձևերի մեջ որոշուած է միայն դրական կողմը ի նկատի առնելով, բայց չէ նախատեսուած բացասական կողմը. այսպես օրինակ,

3 Տեղի է ունեցել Փարիզում, 1929 թ. մարտի 17-ից մինչև մայիսի 2-ը:

4 Քրդական ազգային կուսակցություն, որը ստեղծվել է 1927 թվականին՝ մի շարք քրդական կուսակցությունների և քաղաքական այլ ուժերի ու գործիչների միավորման արդյունքում: Առաջին նախագահն էր Մեմդուհ Սելիմ բեյը՝ Արարատի ապստամբության կազմակերպիչներից մեկը: Ապստամբության պարտությունից հետո կորցրել է երբեմնի հեղինակությունը և Բաղդիսան եղբայրների (Ջելադեթ, Ալի և Քամուրան) գլխավորությամբ ծավալել է սոսկ կրթա-լուսավորական գործունեություն:

1) եթե Հոյբունը հակառակ մեր որոշմանը չուզենայ սահմանափակել իւր գործունեութիւնը Թուրքիոյ սահմաններում, և կամ չուզենայ սահմանափակել իւր գործունեութիւնները մեծ մասով ծախսել երկրի մեջը և ցանկայ ավիւնի հակառակ, և կամ եթե նա հակառակ յոդ. 5 տրամադրութեանց չուզենայ մեր գործուն մասնակցութիւնը և չուզենայ, որ մենք կապուինք այլ խմբակցութիւնների և աշխրեթների հետ, որ դեմ են Թուրքիոյ, մենք ինչ դիրք պիտի բռնենք:

2) եթե քրդական շարժումները լինեն Պարսկաստանում և մենք երկընտրանքի առաջ կանգնած լինենք, ինչ պիտի անել, քրդերի դեմ պարսիկների հետ, թե՛ չեզոք:-

3) եթե հակառակ մեր տեսութեան, պարսիկները բարեկամ նկատեն Թուրքիան և ընդհանրապէս քրդական շարժումը վնասակար և մեզ երկընտրանքի առաջ դնեն կամ դադարեցնել ամեն աշխատանք, կամ կնկատուինք թշնամի Պարսկաստանի, մեր ընտրութիւնը որք պիտի լինի:-

Այս անորոշութիւնների լուծումը թողնուած է եղել ը. Ժ.-ի կողմից բիւրօին և գործիչ ընկերներին ու մարմիններին, լուծելու ըստ ստեղծուած պայմանների: Եւ պիտի նկատել, որ այդ չնախատեսուած հարցերը առաջադրուել են վերջին տարիներս մեր և մարմինների առջև, և այսօր իսկ իւր վերջնական լուծումը չէ ստացած և պիտի դառնայ մեր մտահոգութեան նիւթը:

Պիտի նկատել, որ որոշմանց այդ բերին՝ պատճառը դառած ինչպէս բիւրօյի նոյնպէս և մեր ի մասնաւորի Պարսկաստանի ընկերների մեջ անվերջ մտահոգութեան և երբեմն տարակարծութեան պատճառ. երկու կողմն էլ համագոր իրավունքով, հիմնուած ը. Ժ.-ի բանաձևի վրայ կարող էին իւրահատուկ ձևով բացատրել և որդեգրել գործունեութեան վարքագիծ:

1). Նրանք որ Պարսկաստանում կ'գտնուին և անմիջապէս շահագոգրուած են Պարսկաստանի բարեկամութեամբ և ծանօթ նրա հակաքիւրդ քաղաքականութեամբ[նը], և նոյնիսկ նրա տրամադրութիւնները թուրք-պարսկական մշտական բարեկամութեան, հոռետեսութեամբ կվարուեն մեր բանաձևի այն մասերին որ կվերաբերի հայ-պարսիկ-քուրդ մերձեցման ընդդէմ Թուրքիոյ և ամուր կանգնած կմնային հայ-պարսիկ մերձեցման առանց յոյսերի այդ բարեկամութիւնը օգտագործելու յօգուտ մեր քաղաքական հեռանկարների ընդդէմ պանթուրանիզմի և յօգուտ քրդական շարժման:

և դրան հակառակը. նրանք որ ընդ. Ժ. որոշմանց բովանդակ տրամադրութիւնները ի նկատի ունենին, հնարաւոր կ'գտնենին առանց կօրցնելու պարսիկ բարեկամութիւնը, շարունակել մեր հակաթուրք աշխատանքը և շարունակել հայ-քիւրդ գործակցութիւնը Թուրքիոյ մեջը Պարսկաստանի վրայով: -

Առաջին տեսակետի վրայ կանգնած էին և [անընթ.] Պարսկաստանի ընկերների մեծամասնութիւնը, իսկ երկրորդ տեսակետի կողմնակից էին Բիւրօյի և մյուս մարմինների մեծամասնութիւնը և Պարսկաստանի փոքրամասնութիւնը:

Այս տարբեր ըմբռումների մեջ պիտի տեսնել այս տարակարծութիւնները, որ կայ Վրեժի⁵ մեջը հանդէպ [հանգույն] ներկայացական ձևի, որ բիւրօն կկիրառէ իւր ստացուած պարտականութիւնները կիրառելու համար:

Այս ընդհանուր ծանօթութիւնները տալուց յետոյ, անցնենք ընդ. Ժ. որոշմանց գործադրմանց պատմութեանը, որի ընթացքում կպարզուեն, թէ ինչ սահմաններում իրագործած են նոքա:

- -

Պարսկաստանի վրայով մեր գործունեութիւնը կարելի է բաժանել հետևեալ գլուխներին. ա) գործունեութիւն մինչև ապստամբութիւնը, բ) նախքան ապստամբութիւնը քրդերի վիճակը. գ) ապստամբութիւն. դ) ապստամբութիւնից յետոյ հետագայ մեր անելիքների:

5 ՀՅԴ Ատրպատականի ԿԿ-ի անվանումը:

Մինչև ապստամբությունը

Անցեալը – 1926-ի⁶ շեյխ Սայիդի ապստամբությունից⁷ յետոյ, պարտուած ապստամբների մի մասը նահանջեց դեպի հիւսիս, դեպի Արարատ, դեպի Հայաստան և Պարսկաստան. նրանց մեջ կային ջիբրանցի և հայդարանցիներից այն տարրեր, որ նախքան պատերազմը թե բարեկամական և թե թշնամական շփման մեջ են եղած հայ յեղափոխութեան հետ. այս տարրերը իրանց դժբախտութեան օրին, կիիշեն հայերին և կդիմեն Հայաստանի սահմաններին, բայց հոն որևէ աջակցութեան չգտնելով հանդերձ, թշնամութեան էլ չեն հանդիպի. Խորհրդային Հայաստանը նրանց չի օգնէ իրանց պայքարը շարունակելու թուրքերու հանդեպ, սահմանները կփակէ գործի համար, բայց Հայաստան ապստամոտներին կնդունէ, չի հալածէ և հողեր տալով կտեղափոխէ Շարուր Նախիջևանի շրջաններում: 5000 կհաշուին այդ քրդերի թիւը, որոնք կապրեն Ղազանչի, Սուար, Շահրի շրջաններում, և որոնք համակիր կմնան մեզ:

Պարսկաստան անցնող ապստամբները հալածանքի ենթարկուեցան պարսից կողմից, ոմանք սպանուեցին և ոմանք բանտերը ընկան: Նրանց այդ թշուառ կացութեան մեջ միայն հայերը և մասնավորապես մեր ընկերները ցաւակից և բարեկամ մնացին. այդ մեծապես ազդեց քրդերի վրայ և Դաշնակցութիւնը դառավ նրանց աչքին «Մարդ» վեհանձն կուսակցութիւն:

Թէ Պարսկաստանից, թէ Խորհրդային Հայաստանից ոմանք քրդերից յետ վերադառցան⁸ դեպի Արարատ, որտեղ տեղական բնակչութեան կողքին հավաքուած էր մի փոքրիկ կորիզ ապստամբ քրդերի մնացորդներից: Այդ վերադարձողները դառան կենդանի քարոզիչներ հայ-քիւրդ բարեկամութեան, պատմելով ամեն ուրեք, որ միայն հայը և դաշնակցութիւնն է, որ անկեղծ բարեկամ են իրանց թե ընկած օրերին և թե լայն օրերին:

–Այդ քարոզչութիւնը տարածուեց և Արարատի բնիկների մեջը, ջալալցիների, որոնք հեռուից գիտեին Դաշնակցութեան մասին:

–Աներև⁹ դարձան այդ քարոզչութիւնները, նրանց գործնական հետևանքները եղան երեքը –

Թե Պարսկաստանի ու Իրաքի և մանավանդ Թուրքիոյ քրդերի խավերում տարածուեց այն գաղափարը, որ քիւրդը և հայը կրօնը տարբեր եղբայր ազգեր են և չնայելով, որ քրդերը հանցաւոր են հայերի առաջ, բայց Դաշնակցութիւնը ներած է այդ հանցանքները և իրանց անկման օրին միակ օժանդակող հենարանն է քրդութեան:

Քրդերը վստահեցան իրանց դատի պաշտպանութիւնը արտաքին աշխարհում մեզ և ուղարկեցին դրա համար լիազօրագրեր Ռուբենի¹⁰ և Ահարոնեանի¹¹ անուան:

Նրանք իրանց ղեկավարութեան համար հրաւիրեցին դեպի երկիր մեր ընկերներիս, Դրօշին, Ռուբենին, Արտաշեսին¹², Օլիսկեանին, քիւրդ Ղազօին.

Այսպիսով [անընթ.] [անընթ.] քրդերի կողմից է, որ կառաջարկուի հայ-քիւրդ բարեկամութիւնը գործնական հողի վրա դնել: –

Թե ինչքան Դաշնակցութիւնը արձագանքեց քրդերի այդ ցանկութեանը արտասահմանում և միւս շրջաններում այս զեկուցման նիւթից դուրս է: Համառոտ նկարագրեն պարսից կողմից եղած աշխատանքները:

6 Տեքստում գրված է այսպես, իրականում շեյխ Սայիդի ապստամբությունը տեղի է ունեցել 1925 թ.:

7 Շեյխ Սայիդի (Նաքշբանդի սուֆիական միաբանության առաջնորդ) ապստամբությունը տեղի է ունեցել 1925 թ. փետրվարի սկզբից մինչև ապրիլի կեսերը Լիջե, Վարդո, Դիարբեքիր, Էյլազիզ նահանգներում: Ապստամբությունը պարտություն է կրել, իսկ ղեկավարները, այդ թվում՝ շեյխ Սայիդը, մահապատժի են ենթարկվել թուրքական Անկախության դատարանի որոշմամբ:

8 Այսպես է բնագրում:

9 Բառի վերջավորությունն անընթեռնելի է:

10 Խոսքը Ռուբենի՝ Մինաս Տեր-Մինասյանի մասին է:

11 Խոսքն Ավետիս Ահարոնյանի մասին է:

12 Խոսքն Արտաշես Մուրադյանի մասին է:

Արտաշեսը:– Քրդերի պահանջին ընդառաջելով, հակառակ Վրեժի մեր մարմնի ցանկությունը, Բիւօրոյի որոշմամբ Միսակը ճամբեց Արտաշեսին Արարատ:

–Արտաշեսը մեր կենսի մեջ առանձին աչքի զարնող ոյժ չէր, և նոյնիսկ կալը պահանջունը շատերից նրա վտարումը մեր շարքերից. բայց նա ցուցադրեց Արարատ գնալով մի զոհաբերութիւն, որ քչերն ընդունակ են. յետագայ նրա գործունեութիւնը ցոյց տուեց, որ նա բացառիկ ընդունակութեան տեր անձ է եղել և այսօր թեև հայկական շրջանակին անծանոթ մեկն է, բայց քիւրդ ժողովրդի մեջ նա դառած է ազգային հերոս և յայտնի է իբր կազմակերպող, քաջ և անձնագոհ քիւրդ ժողովրդին համար:

Արտաշեսը կարողացաւ իրարու թշնամի քիւրդ աշիրեթնէրը իրարու հաշտեցնել, ոչ միայն Արարատի շուրջը եղածներին այլև Ալադադումը, մինչև Սիփիանի և Բինգետի շրջանակներում եղածներին և նա դառաւ առանցքը այդ ոյժերի: Նրան կպակասեր մտաւորական ոյժեր ընդարձակող կազմակերպութեան ղեկավարելու համար, նա գտաւ հանձինս Իհսան Նուրիի¹³, որը արքայութեան վիճակում կ'գտնուէր պարսից Ջանջան քաղաքում, որտեղ կ'գտնուէր և բժշկական գործով մեր ընկերներից Ա. Բաբայանը¹⁴, ծանօթ Իհսան Նուրիին իւր գերութեան ընթացքում, երբ Իհսանը կծառայէր Կարաբեքիի սպայակոյտում: Բաբայանը կկազմակերպէ Իհսանի փախուստը, որը կանցնի Արարատ: Արտաշես և Իհսան կկազմակերպին Արարատի կառավարութիւնը և միաժամանակ ընդունել կտան քրդերին «Հոյբունի» հեղինակութիւնը:

1928 թուին Արարատի իշխանութիւնը դառաւ կատարեալ սպառնալիք արևելեան նահանգներում. թուրք իշխանութիւնը նրան ոչնչացնելու համար ուղարկեց ոյժեր, բայց որոնք պարտուեցին կորցնելով 30 գնդացի, 2 թնդանոթ և ըստ չստուգուած թուերի 8000–10.000 զորք զբաղեցնէին. այս յաղթութիւնները աւելի հեղինակաւոր դառցրեց Արարատի ազդեցութիւնը արևելեան նահանգներում: Բայց այդ յաղթութեանց հետ զուգահեռ ծանրացաւ նրա դրութիւնը այն տեսակետով, որ նա ազատագրութեան կենտրոն դառաւ ոչ միայն Թուրքիոյ, այլև պարսից և բօլշևիկների կողմից: Այս երեք ոյժերն էլ թշնամական վերաբերմունք ցոյց կուտային դեպի ապստամբները և զորքեր կկենտրոնացնէն Արարատի ազդեցութեան շրջանակներում նեղելով նրան մասնավորապէս պարենի և ռազմանիւթի կողմից:

–Այս դժուարին կացութիւնից դուրս ելնելու համար փորձեր եղան Արարատի իշխանութեան կողմից բարիացակամութիւն վաստակել պարսից, բայց ընդհակառակը անբարիացակամութիւն գտան. իզուր անցան Հոյբունի փորձերը Թեհրանում, ուր ճամբուած էր Ջհանգիրը¹⁵. նա արքայութեան Թեհրանից առանց արդիւնք ձեռք բերելու և ազդարարութիւն եղավ և մեր Պարսկաստանի ընկերներին առաջնորդի միջոցով, որ եթէ որևէ կապ պահուի Արարատի հետ, պատասխանատու են հայերը – և միաժամանակ Արարատի սահմանամերձ շրջաններում հայերի երթևեկը խստիվ արգելուեց:

–Արարատը փաստորեն կղզիացուած լինելով ամեն կողմից յուսահատ կացութիւն էր ստեղծած ըմբոստների համար: Մաքուի բօլշևիկ կոնսուլը և Նախիջևանից եկած բօլշևիկ գործակալներ կ'գայ [անընթ] քրդերին, թե իրանք կարող են հենարան

13 Իհսան Նուրի (1892 – 1976), օսմանյան և քեմալական բանակների սպա, ազգությամբ՝ քուրդ: 1920-ական թթ. սկզբներին հարել է քրդական ապստամբական խմբերին: 1924 թ. լինելով թուրքական բանակի դիվիզիայի հրամանատար՝ մասնակցում է Բեյթ Շեբարում ասորիների ապստամբության ճնշմանը, սակայն հենց այդ ժամանակ էլ ինքն է ապստամբում քեմալական իշխանութիւնների դէմ և իրեն հավատարիմ քուրդ սպաների ու զինվորների հետ անցնում Իրաք, այնուհետև Իրան, որտեղ էլ ձերբակալվում է: 1927 թ. ՀՅ Դաշնակցության ջանքերով փախչում է քանդակից և տեղափոխվում Արարատ, որտեղ էլ դառնում է ապստամբության ռազմական ղեկավարը և ստանում փաշայի տիրոջ: Վերջինիս պարտութիւնից հետո նորից անցնում է Իրան և ստանալով քաղաքական փախստականի կարգավիճակ՝ բնակություն է հաստատում Թեհրանում մինչ իր մահը:

14 Ռուբենն այստեղ ակնարկում է Կարսի 1920 թ. հոկտեմբերյան ողբերգության օրերին գերի ընկած ՀՀ նախարար Արտաշես Բաբայանի մասին:

15 Ինքնութիւնը պարզել չհաջողվեց:

դառնալ և ճամբայ բանալ որոշ պայմաններով. իրաւունք խնդրեց Արարատը խօսելու նոցա հետ, իրաւունք տրուեց նոցա և դրա հետևանքը եղավ Արտաշեսի դատադրաբար ձերբակալուելը Սադարաբում:

Արարատի վիճակը – Արարատի շուրջը և վրան կրնակին ջելալի աշիրեթը, որը բաժանուած 22 ցեղերի, այս 22 ցեղերը բաժանուած են երեք պետութեան սահմանների մեջ, որոնց վիճակագրութիւնը, բնակութեան վայրերը, ունեցած ոյժը հետևեալ վիճակագրական տախտակով կարելի պարզել:

տես վիճակագրական տախտակը¹⁶: –

Այս վիճակագրական տախտակից կարգուի, որ Արարատի

22 ջալալի ցեղերից 8 նախկին ռուսական հողերում, 8 նախկին պարսկական հողերում և 6ը տաճկական հողերում կապրին.

որ այդ 22 ցեղերի վրանների թիւը եղած է 8400, որից 2300ը նախկին ռուսական հողերում, 3000ը պարսկական և 3100ը տաճկական հողերում:

որ 22 ցեղերը 8400 վրանով ունեցել են 22 կենտրոնական ցեղապետանիստ գիւղեր 2270 տնով, և 8400 վրանները ամառայ յայլախների տեղ ունեցել են Արարատները և Սինակ լեռները և մի փոքր մասը Կարենիից¹⁷ – Թանդուրեք – Ալադաղ շղթան: [անընթ.] համարիայ ամբողջը տաճկական հողամասերը: –

Քանի Արտաշեսը Արարատում էր, այս 8400 վրանները իւր 22 ցեղերով իրարու միացան, նրանց տարակարծիքութիւնները հարթուած էին, և մի կառավարութիւն էր ստեղծուած որ բոլորին հարազատ կհամարուեր. բոլոր ցեղերն էլ իրարու կպաշտպանեին և 1928 թուի կեսերին և ոչ մի ցեղ չեղաւ որ դաւաճաներ և թուրքերին կողմնակից լիներ. կային մի քանի անհատներ միայն, որոնք սահաբեկուեցան և միութիւնը կատարեալ էր Արարատում:

–Այդ միութիւնը ոյժ ներկայացնելով պատկառանք կազդեր Արարատի շրջապատող ցեղերի վրայ և Արարատը դառած էր մի կենտրոն քրդական հեռաւօր աշիրեթների վրայ. Արտաշեսը երկիցս ճամփորդութեամբ մինչև Ալադաղ, Խնուս, և Բասեն (Բաքալթի). կանչած էր Արարատի հետ հայդարցի, ջիբրանցի, հասանանցի, սիփրնցի, բըսուկցի և այլ ցեղերին, և կապ հաստատած էր մինչև Սիփան, և Մուշ, իսկ դեպի Կողբ իւր ճամփորդութեամբ կանչած էր իւր հետ Սուրմալուի և Կարսի քրդութեան, և մի անգամ էլ անցած լինելով դեպի Խորհրդային Հայաստան, մինչև Բայազետի շրջանը, կապած էր իրան հետ հոն ապաստանած հայդարցիների մնացորդներին և հայերին: –

Նրա այս մեծ յաջողութիւնները պիտի վերագրել հետեւելալներին.

- նա կտիրապետեր քրդերու լեզուին և գուցե միակն էր այդ շրջանում գաղափարական և լեզուանի ու յեղափոխական գործից հասկացողը.
- քրդերը գիտեին, որ նա հայ է և նրա թիկունքում կերևակայեին հայկական ոյժ.
- նա նիւթապես անշահախնդիր էր, ստացած միջոցները կ'գործադրեր ըստ նպատակի և ինքը կտառապեր քրդերին հաւասար:–

Մրա վրայ եթէ ավելացնենք իւր անձնական յատկութիւնները և տակտը, նրան դառցրել էր քրդերի աչքում մի հերոս, որին լսելը և հետևելը և չդավաճանիլը դառած էր պատուի և ազգային բասիրի խնդիր:

Նրա ձերբակալուելուց յետոյ այդ հսկայ գործոնը սկսեց փլզել:–

Արտաշեսի կողքին կային Իհսան Նուրին, Հըսկէ Թելլօն, շէյխ Աբդալ Գատըր¹⁸ և այլն, բայց բոլորի մեջ Իհսան Նուրին էր միակ մտաւորականը և լայն աշխարհայացք ունեցող., նա էր և ղեկավարութեան գլուխ կանգնած անձը և Հոյբունի և մեր ներկայացուցիչը, երբ Արտաշեսը կար այս անձը նրա հետ իրարու պակաս կլրաց-

16 Վիճակագրական աղյուսակը բացակայում է:

17 Թերևս՝ Կարինից:

18 Սաքան ցեղի ցեղապետ:

ներին, Իհսան Նուրին էր գինվորական, իսկ Արտաշեսը հանդուգն և քաջ, Նուրին ծրագրող, Արտաշեսը գործադրող, Իհսանը ձևապաշտ, Արտաշեսը ճկուն, բայց որ հակառակ է Իհսանին կապկաստին յատկություններ, որ շաղախ դառնար միջնակ տարամերժ քիւրդ ցեղերի միջև. նախ

Իհսանը չգիտեր քրդերեն և նա լինելով թրքախոս և կինն էլ լինելով թուրք, որ մի գայթակղություն էր Արարատի լեռներում իւր պոլսական հագուստներով, քրդերը նրա մեջ չէին տեսնի հարազատություն,

իբր թուրք աղայ նիստուերով[՞] և միամտություն ունենալով թուրք գերիների հետ վեհանձնաբար վարուելով, դա կկասկածուեր, որ նա կաշառուած է, կամ կարող է լքել իրանց յօգուտ թուրքերի.

Իհսանը ինքն էլ և իւր ընտանիքն էլ չէին ապրի չարքաշ և այն փոքր տարբերությունը, որ կար իր և քրդերի կենցաղի մեջը անարդարօրեն բացատրել կտար, թէ նա մեծ գումարներ կստանայ դրսից՝ մեզնից և յօգուտ իրան կ'գործածէ.

Իհսանը անձամբ չէր շրջէ ցեղերի մեջը, կզգուշանար նոցանից և այդ զգուշությունը փոխադարձ կասկածներ կխորացներ այն աստիճան, որ Իհսանը թիկնապահ կպահանջեր հայերից, իսկ քրդերն էլ վերապահ դիրք ունեին հանդեպ նրան:

1929-ի վերջերին Արարատի ոյժերը կբայթայունէին ներսից - հոն ապաստանած հայդարցիների պետը և հիփըջցիք դիմումներ կանեն Դաշնակցութեան, որ այլևս դրամ չուղարկենք, որովհետև Իհսանը իւր օգտին կ'գործածէ և կպահանջեն ծախսատարը անել հայ: Պիտի նկատել, որ այս բողոքները անհիմն էին, որովհետև մենք գիտեինք մեր ճամբած գումարների ոչնչությունը, և այդ ամբաստանությունները իրանից կառնեն:

Արդուլ Մեջիդի որդին Խալիսը շարունակ գոգություններ կանէ Արարատի ղեկավարութեան դեմ և հիփըջցի ու հասանցի կովողները բաժանվելով կհեռանան Արարատից:

–թուրք կառավարությունը նկատելով ներքին թուլությունը յարաբերություն կհաստատէ զանազան գլխավորների հետ, նրանց գայթակղեցնելու մտոք, տեսակցություններ կլինեն Իհսանի և Հսկէ Թելօի և թուրք ներկայացուցիչների միջև, վերջիններին չի յաջողի խաբել և իրանց կողմը գրաւել Արարատ գլխավորներին, բայց թուրքերը կկարողանան օգտագործել այդ տեսակցություններն իսկ, տարածայնելով, որ պարսիկների դեմ պիտի լինել և որ իրանց հետ են Իհսանը և ուրիշները:

Գաղտնի և յայտնի բանակցություններ կսկսեն մանր ցեղապետների և թուրքերի միջև, և ճարպկորեն թուրքերը կյաջողին գրաւել ոմանց անձնապես շահագոգոելով և կռուցնելով մի ցեղը միւսի դեմը և ապստամբական հոսանքը ջանալով ուղղել պարսիկների դեմը:

Միաժամանակ նա կառաջացնէ պարպումը և գորքերի կենտրոնացումը:

Տաճիկների այս քաղաքականությունը իւր վնասակար արդիւնքները կտան[:]

Գիլուի ցեղի Ահմադէ Շամօն, որ նախկին ռուսական սահմաններում կ'գտանի, թշնամական դիրք կբռնէ դեպի սաքանցիք, հըսէ սօրան ցեղը.

Կօթան մեծ ցեղը որ 700 վրան ունի Ահմադ բեկի գլխավորութեամբ վեճի կ'բռնուի Սաքան մեծ ցեղի հետ որի գլխավորն է շեյխ Աբդալ Կադրըր կուզ Կանքան գիւղի տիրապետութեան հետևանքի. այս երկու ցեղերը որ ամենամեծն են 700 և 300 վրաներ և որ Արարատի ամենակոռոզ տարրերն էին, իրարու հետ պատերազմի մեջ կմտնեն հողային խնդրով. կօթանցիք յաղթող կհանդիսանան թուրքերի աջակցութեամբ և շ. Աբդալ Գատըր պարտուած կապաստանի Ալադաղից Հըսկէ Թելօի մոտը: Կօթան ցեղը որ նոր տարին թուրքերի պարտութեան պատճառ էր դառած խլելով 2 թնդանոթ և 30 գնդացիք ի հեջուկս Իհսանի և Բրօի որ ապաստան է տուած շ. Աբդալ Գաթըր իրանց խլած թնդանոթները և գնդացիքների մի մասը կհանձնեն թուրքերին: Կօթանցիների այդ դիրքը պիտի պատճառ լղառնայ Արարատի կործանման, իսկ բասկուլի ցեղը իւր 150 վրանով կնկնի թուրքական ազդեցութեան տակ և թշնամություն կսկսէ պարսիկների հանդեպ:

1929 վերջերը Արարատի միութիւնը չկար, նրա մի մասը թուրքերի կողմն էր, մի խոշոր մասը վերապահ սպասողական վիճակի մեջ էր, մի մասը պարսիկների դեմ էր դառած, և միայն հրէէ սօրան ցեղի մի փոքր մասը 600 վրանից 200 վրանը միայն հաւատարիմ Բրօին կշարունակեր նախկին վարքագիծը լինել թուրքերի դեմ:-

Ահա այս դժուարին կացութեան էր, որ կհարկադրեր Իսահանին պահանջել մեզ-նից դրսի ոյժեր թէ ղեկավարելու և թէ կռուողներ, նա մեզ կառաջադրեր Արարատը վերահաս անկումից փրկելու համար հետևեալները. 1). շահել պարսից բարեացա-կամութիւնը. ք) ուղարկել առնուազն մի քանի հարիւր ֆեդայիներ, գ). ղեկավար անձինք և ռազմանիւթ:

Պարսիկները և քրդական հարցը

Պարսիկները գիտեին թէ ռուսների և թէ թուրքերի ձգտումները, որ կջանային քրդական հարցը դառցնել իրանց դեմ, նրանցից ծածուկ չէին ոչ Ուրմիոյ և Մաքուայ մեջ եղած թուրք և բօլշևիկ գործակալների ջանքերը, որոնք դրամով, զենքով և խոստումներով կջանային իրանց կողմը գրաւել թէ աշիրեթներին և թէ ապստամբ քրդերին որ դադարեցնեն Թուրքիոյ դեմ աշխատանքները և թշնամանան պարսից հետ: Այս դրութիւնը մեծապէս կանհանգստացներ պարսիկ իշխանութիւնները.

միևնոյն ժամանակ պարսիկ իշխանութիւնը թուրք և բօլշևիկ իշխանութեանց ճնշման տակ կ'գտուէր այն մեղադրանքով, որ թոյլ տուած է և աջակցած է քիւրդ և յիկայ յեղափոխականներին ամրանալու Արարատում և հենարան դառցնելու թուրք և բօլշևիկ երկիրների դեմ գործելու համար:

-1) որի հիման վրայ կպահանջեն ճնշումը և ոչնչացումը Արարատի սահմանա-մերձ քրդերի, 2) Դաշնակցական շեֆերի ձերբակալում և հեռացումը, 3). Ուրմիոյ, Մաքուայ, Սալմաստ շրջաններում հայերի տեղաւորման արգելում և այլն:-

Անելքի առաջ էր դրուած պարսից իշխանութիւնը, նա քրդերին չպիտի կարո-ղանար միայնակ ճնշել ինչպէս և թուրքերը չէին կրցած 1927-28 ճնշել և յայտնի լինելով իրան թուրքերի քաղաքականութիւնը սիրաշահել քրդերին պարսից սահ-մաններում և իրան գործիք դառցնել, կվախնար բաց թշնամական դիրք բռնել դե-պի քրդերը,

նրան յայտնի էր, որ հայերը մասնակից են քրդական շարժմանը, բայց միաժա-մանակ յայտնի էր, որ Դաշնակցութիւնը հակաբօլշևիկ և հակաթուրք քաղաքակա-նութիւն ունի, և նա դեմ է քրդերի շարժմանը պարսից հողերում, նրան բացարձակ հալածելը կնշանակէր դիւրացնել թուրքերի և բօլշևիկների աշխատանքները և քր-դերին ևս զսպող ոյժից զրկել:

Այս երկրնտրանքները խիստ փափուկ կացութեան մեջ էին դրած իշխանութիւ-նը, որը երկերեսանի քաղաքականութեան հետևելու ստիպուած էր,- արտաքուստ թշնամի ձևանալ դեպի հայերը և քրդերը, բայց ներքուստ ցանկանալ, որ քրդերը լոյսլ մնան իրան սահմաններում և թշնամութիւնը նոցա խորանայ Թուրքաց սահ-մաններում:-

Այս երկդիմի քաղաքականութիւնը առաջ էր բերած պարսից ղեկավարութեան մեջ, նահանգապետների և հրամանատարների մեջ երկու տարբեր հակադիր ըն-թացք դեպի քրդերը և Դաշնակցութիւնը.

նրանք որ ծագումով թուրք են, և կամ ներքուստ համակիր էին պանթուրանիզ-մին և աղբրեջանական հարցերին և կամ նրանք, որ այս կամ այն պատճառով բօլշևիկների հետ լեզու գտնելու կողմնակից էին, պարզ թշնամական վարքագիծ ընդգրկած էին դեպի հայերը, իմասնաւորի Դաշնակցութիւնը և քրդերը, կողմնակից լինելով վերջինների բնաջնջմանը և հայերի հալածմանը:-

Այս հոսանքի մարմնացում պիտի համարել գորահրամանատար Նախչևանսկին¹⁹

19 Քելբալի Խան Ջաֆարկուլի Խան օղլի Նախիջևանսկի (1891-1931) - ցարական Ռուսաստանի, Աղբրեջանի և Իրանի ռազմական գործիչ: Աղբրեջանի խորհրդայնացումից հետո գեղապետի կոչումով անցնում է Իրան և ծառայութեան անցնում իրանական բանակի կազմում, որտեղ էլ ստանում է գեներալի կոչում: 1931-ին

և 1921-ի նահանգապետը, Ադրբեյջանում:-

Կար և երկրորդ հոսանքը որի գլուխն էր ընդհանուր հրամանատար Զաֆար Դովլեն²⁰ և շահը²¹, որոնք ներքուստ գոհ էին քրդական թշնամութեան խորացումով հանդեպ թուրքերը և գոհ էին, որ Դաշնակցությունը ունի հակաթուրք և հակաբոլշևիկ ուղղություն և քրդերին կողողէ դեպի թշնամութիւն միմիայն դեպի Թուրքիան: Բայց այսպես լինելով հանդերձ չէին համարձակուիլ իրանց հովանու տակ առնել դաշնակ և քուրդ գործողությունները Արարատի շրջանում:-

Այս քաղաքականութեան ազդեցությունը հայերի վրայ -

-Պարսից այս ընթացքը խիստ ծանր կացություն էր ստեղծած Ատրպատականի հայության և Դաշնակցութեան գոյութեան տեսակետից. ինչպես վերևը ակնարկեցի Մաքայ շրջանում Թաղես առաքելալուսն հայերի մուտքը արգելուց, առաջնորդը վանքն քշուց և ընկերները ձերբակալուեցին, Սալմաստ և Ուրմի գաղթականների դրությունը ծանրացուեց և աչքի ընկնող մեր ընկերները ինչպես այդ շրջաններից, նոյնպես և Ղարաղաղից հեռացուեցին ինչ և ձեռք տալ Արտաշեսիմ²²], նրան համարելով ձամբուած հայերի կողմից, սպառնալիք եղավ ձերբակալման և մի քանիսը բանտարկուեցին:

Այս վիճակը Ատրպատականի մեջ առաջ բերեց վերաքննութեան խնդիրը մեր գործակցությունը քրդերի հետ գոնէ պարսից հողերով և կպահանջուեր դադարեցնել գործունեությունը և Արտաշեսին հեռացնել:-

Բիւրօն այս վիճակը և դիմումները քննելով չնդառաջեց եղած ցանկություններին, այլ ընդհակառակը որոշեց շարունակել Արարատին ոյժ տալ հետևեալ ձևով:-

ա) Պարսկաստանի հայությունը և մեր ընկերները ոչ մի աջակցություն և կապակցություն չպիտի ունենան քրդական գործին հետ.

բ) Բիւրօն համաձայն ը. ժ. ի որոշման պիտի շարունակէ քրդական գործը Թուրքիաց սահմաններում.

գ) այդ գործը տանելու համար նա կվերցնէ պատասխանատությունը իւր վրայ և կ'գործադրէ իւր ներկայացուցիչների միջոցով:-

Այսպիսով ազատ կկանչուեին Պարսկաստանի մեր մարմինները և նրանց կիրահանգուեր ասել իշխանութեանը, որ իրանք դեմ են քրդական գործին և համամիտ են իշխանութեան, բայց Փարիզն է, որ կվարէ այդ գործը:-

Այդպես էլ կասեն թէ առաջնորդը և թէ կկ-ին.

Այդ նոյն ժամանակներումը, որ կձերբակալուի Արտաշեսը և Արարատի թղթակցությունները կնկնին պարսից ձեռքը, որ անկարող կլինեն դեշիֆռէ անել. նամակների ձերբակալուիլը և չկարողացուիլը և Արտաշեսի բոլշևիկների կողմից ձերբակալուիլը աւելի կանկածների տեղիք կտայ, բացատրուելով, որ մենք անհաւանական չէ, որ խաղ կխաղանք և գուցէ բոլշևիկների հետ միացած դեմ ենք պարսիկներին. և ծանր մթնոլորտ կստեղծուի առաջնորդի և մեր ընկերների շուրջը:

-ըստ ընդունած որոշման, կյայտնուի որ նամակների բանալին կ'գտնուի Փարիզ Ռուբենի մօտը և պետք է Փարիզում բացատրություններ ուզել:

-Արտաքին գործոց նախարարութեան միջոցով կհասնի պարսից դեսպանատունը գրություններ թարգմանուելու համար և Ռուբենը կկանչուի բացատրութեան:

-Ձերբակալուած նամակների բովանդակությունը յայտնի էր մեզ, և գիտեինք որ գրուած են ի նպաստ պարսիկների, ուստի բիւրօի որոշմամբ նամակները թարգմանուելով, մի բացատրագիր կ'գրուի մեր նպատակների մասին քրդական խնդրում, մեր վարքագիծը հանդէպ Պարսկաստանի և կյայտնուի որ պարսկահայություն առնչություն չունի այս խնդիրների հետ և միաժամանակ կպահանջուի պատասխան հետևեալ հարցերի համար:-

սպանվում է Մակուում քրդական ապստամբությունը ճնշելու ժամանակ:

20 Իրանական բանակի հյուսիս արևմտյան խմբավորման հրամանատար մինչև 1930 թ. ամառը:

21 Խոսքը Ռեզա շահ Փահլավի մասին է (1878-1944), գահակալման տարիները՝ 1925-1941:

Քրդական հարցը մեզնից անկախ գոյություն ունի և մենք մեր շահերը ելակետ ունենալով կձգտինք այդ շարժումը սահմանափակուի միմիայն Թուրքիոյ մեջ, որտեղ մենք ևս քաղաքական շահեր ունենք; Թուրքիոյ մեջ եղած քրդական շարժումը և մեր քաղաքական նպատակներ հետապնդելը Թուրքիոյ սահմանների մեջ դեմ է Պարսկաստանի շահերին:–

- քրդերին կան խրախուսողներ, որ նրանք հետապնդեն քաղաքական նպատակներ պարսից և իրաքի սահմաններում, այդ են նպատակները Թուրքիոյ և բոլշևիկների, մեր ձգտումն է որ ընդհակառակը լինի և մենք կջանանք քրդերը լինեն լոյալ Ձեր հանդեպ և կանգնեն Պարսկաստանի ամբողջականության և խաղաղության տեսակետի վրայ, այդ պատճառով էլ միացած ենք քրդերի հետ – մեր այս աշխատանքը օգտաւէտ է թե վնասակար պարսից շահերին:
- մեր ը. ժ. որոշումը լինելով Պարսկաստանի բարեկամությունը ամեն բանից վեր դասել և նոյն իսկ դադարեցնել մեր գործակցությունը քրդերի հետ եթե դուք նպատակահարմար չեք գտնի, պիտի յայտնեք մեզ գրաւօր, որ պատասխանատուիթիւնը ընկնի Ձեր վրա, որովհետև վստահ ենք որ մեր գործից բացակայութեան հետևանք քրդերը կարող են ընկնել թուրքերի ազդեցութեան տակ [անընթաց]:
- մենք չունենք Արարատում ներկայացուցիչ դաւադրութեամբ ձերբակալուած լինելու հետևանք, և այլևս դադարեցնելով մեր գործունեությունը կսպասենք Ձեր դրական պատասխանին վերսկսելու համար:–

Այս խօսակցությունը փոխանցւեց Թեհրան, դեսպանը և զինւորական կցորդը համամիտ լինելով գործածութեան²² իրանց անկարող համարեցին վերջնական պատասխան տալ:–

Մի քանի շաբաթ յետոյ, ստացուեց մի նամակ, որ «խօսուած հարցերի պատասխանը առնելու համար պետք էր որ տեղի վրայ Թեհրանում բացատրուեր»,– այս պատասխանը թեև ոչինչ չէր ասէ, որոշուեց փորձել Թեհրանում պարզել [ամեն] ինչ. մանաւանդ որ Արարատի շուրջը կհավաքուէին զորքեր և մանաւանդ որ ծանր կացութիւն ստեղծուի ոչ թէ միայն քրդական հարցի համար, Ատրպատականի հայութեան կացութիւնը, այլև Խորհրդային Հայաստանում և Անդրկովկասում լուրջ շարժումներ էին սկսուած:

Պարսկաստան, Թեմուրթաշ²³.

1929 – վերջին, կեղծ անցագրով առանց պարսից գիտութեան ճամբուեց Ռուբենը Պարսկաստան, չառնելով և մեր ընկերների համաձայնությունը, նրանք վտանգաւօր և աննպատակ կ'գտնէին նման մի փորձ:

Պարսկաստանի փաստական կառավարիչը էր պալատական նախարարը Թեմուրթաշը, նրանից էր կախուած ամեն ինչ, ուստի տեղ հասնելու երկրորդ օրն իսկ, երբ դեռևս միայն մի քանի ընկերներ գիտէին Ռուբենի Թեհրան հասնելը, տեսակցութիւն խնդրուեց և որը անմիջապէս ընդունուեց:–

Թեմուրթաշին յայտնի էին Փարիզի մեր տեսակցութեանց մանրամասնութիւնները և խնդիրները իւր ամբողջ ծաւալով –

Նա առաջադրեց հետևեալ հարցերը.

Հայաստանի անկախութիւնը և Ձեր նրա իրագործման հետապնդումը բնական կ'գտնենք:

²² Թերևս գործակցության:

²³ Արդդիոսեյն Թեմուրթաշ (1883–1933), Իրանի պալատական նախարար, որի ազդեցությունը Ռեզա շահի վրա շատ մեծ էր: Սակայն ըստ Ռուբենի վարկածի՝ Արարատի ապստամբության պարտությունից հետո, երբ Իրանը կանգնեց խորհրդային ռազմական ներխուժման փաստի առջև, շահը նրան մեղադրեց արկածախնդրության մեջ: Իսկ ըստ տարածված պաշտոնական կարծիքի՝ Թեմուրթաշի շնորհագրկման և բանտարկման պատճառ է դարձել Մեծ դեպրեսիայի ժամանակ անգլիական նավթային ընկերության հետ Իրանի համար ոչ շահավետ պայմանագրի կնքումը, որի պատճառով պետական գանձարանը կրել է խոշոր վնասներ:

Հայաստանի անկախությունը Պարսկաստանի շահերին դեմ չէ. նոյն իսկ օգտակար, եթե դուք Ձեր նպատակների մեջ չդնեք և Պարսկահայաստան ստեղծելը:

Բոլշևիզմը վնասակար է մեր երկրի ներսում և գոհ ենք որ դուք հակաբոլշևիզմ լինելով կհակադդեք բոլշևիզմի մուտքը Պարսկաստանում.

- բայց սովետական իշխանությունը և նրա դրացիությունը ավելի նպաստաւոր է Պարսկաստանի շահերին քան ցարական, կամ այլ սոցիալիստական: Սովետները ազատեցին Պարսկաստանը ռուսական և նոյն իսկ այլ ազդեցություններից. ուստի մենք բարի դրացիական հարաբերություն պիտի ունենանք և դեմ ենք որ դուք Ձեր պայքարով նրանց դեմ մեր և սովետների յարաբերությանց ցրտությանց պատճառ լինեք:

–Պարսկաստանը չպիտի դառնայ Ձեր հենարանը հակասովետ պայքարի Կովկասի սահմաններում:–

Քրդական շարժումը դեմ է Պարսկաստանի շահերին, թեև նրանք ցեղակից են մեզ, որովհետև Պարսկաստանում կայ մի մեծ զանգված մինչև Լոռեստան որ կարող են վարակուել այդ շարժմամբ. ուստի մեր շահերին հակառակ է քիւրդ ժողովրդին կազմակերպել առանձին կուսակցության մեջ. այդ տեսակետով ցանկալի չէ գոյությունը «Հոյբունի» մեր երկրի մեջը և պետք չէ որ դուք աջակցեք նրան մեր երկրում:–

- թուրքական միտումները Ատրպատականում մեզ յայտնի է, և հայերի հակաթուրք ընթացքը կգուգադիպի մեր շահերին, բայց ցաւալի է, որ արևելեան նահանգներում այլևս հայ չկայ.
- եթե Ձեր ձգտումն է քրդերին փոխարինել հայերով արևելեան նահանգներում դժուարություններ հարուցանելով թուրքերի դեմ, դա կարող է լինել տեսականօրեն մեր շահը, Ձեր շահը ինչ է:–

Յիշեալ սկզբունքները հակառակ չլինելով մեր վարքագծին հետևեալը առաջարկուեց:

Պարսկահայաստանի հարց չկայ, և պատասխանատու ենք եթէ առաջադրենք նման մի հարց, և աւելին եթէ կան և ցոյց տրուին նման խելացնորներ, մենք պատրաստ ենք հալածելու Ձեզ հետ միասին այդպիսիներին:

Սովետներից մենք կպահանջենք հեռացումը մեր երկրից ռուսական զօրքերի, բայց կ'գիտակցենք, որ դա հնարաւոր չէ մեր ոյժերով և հնարաւոր է միմիայն ընդհանուր յեղաշրջումով, ուրեմն մինչև ընդհանուր յեղափոխությունը մենք ոչ Պարսկաստանի և ոչ մի վայրի վրայով առանձին որևէ շարժում չենք անելու:

Ուրեմն Ձեր արտաքին քաղաքականության խոչընդոտ չենք այսօր.

Մենք կանանք հակասովետ և հակակոմունիստ, և դեմ ենք նրա ծաւալուելուն, որին Ձեր ներքին քաղաքականության մեջ օգտակար է մեր ընթացքը

Մենք կանգնած ենք մեր շահերից թելադրուած Ձեր երկրի ամբողջականության տեսակետի վրայ, երկու պատճառով, մին որ Թուրքիան չկարողանալով մեծանալ ի հաշիւ Ատրպատականի, չպիտի մեզ կարողանայ խեղդել պանթուրանական ծովի մեջ, և երկրորդ որ քրդերը չկարողանալով միացեալ Քրդստան ստեղծել պարսկական հողերով, այնքան ոյժ չպիտի ունենան պահել իրանց ձեռքը այն Արարատը և Վանը, որոնք հայության հայրենիք են: –Այս որքան մեր աւելի ձեր շահն է:

4)–քրդական ամբողջական զանգուածի արթնացումը և ամբողջական Քրդստանի ստեղծումը ոչ մեր շահերից կթելադրուի և ոչ էլ մեր նպատակն է, մեզ համար գոյություն չունի ոչ Իրաքի և ոչ էլ Պարսկաստանի քրդական հարցեր, և եթե մեզնից անկախ գոյություն ունեն, մենք աւելի Ձեզ հետ ենք քան քրդերի:

Քրդական հարցը մեզ հետաքրքիր է միայն Թուրքիայում, որովհետև նա պատնէ է պանթուրանիզմի առջև, որովհետև նա կարող է թուլացնել Թուրքիան, որովհետև եթէ նա յաջողելու լինի, մենք ևս հաւանականություն կունենանք յաջողելու առաջ բշելու Տաճկահայաստանի խնդիրը և ի վերջոյ աւելի հաճելի է տեսնել Քրդստան, քան Թուրքիա և աւելի դիրին է Քրդստանից առնել մեր իրաւունքը, քան Թուրքից: –

Հիմնական կետերում համաձայնություն կայացնելով, որոշուեց հավանական է Շահի համաձայնությունը առնել վերջ:-

1. Պարսկաստանի մեջ հակակոմունիստ մնալով չպետք է Պարսկաստանը հե- նարան ծառայեցնել Անդրկովկասում շարժումներ անելու համար:

2. Պարսկաստանի հպատակ չեղող հայերը կարող են անցնել Տաճկական ար- նելեան նահանգները աշխատելու քրդերի մեջը, պայմանով որ նրանց աշխատան- քը ազդուի միայն թուրքերի դեմը: Նրանց հետ կապի և մատակարարման աշխա- տանքները կթոյլատրուի, բայց խիստ գաղտնի կերպով:

3. Պարսից իշխանությունը երբ գործի վրայ բռնեց, պիտի հետապնդէ և ձերբակալէ, բայց հրամանատարական կազմը գաղտնի պիտի աջակցէ և դիրացնէ:

Կառավարությունը ինքը պարեն չի տալու, բայց սահմանային քրդերին ապս- տամբներին օգնելու և պարեն փոխադրելուն չպիտի արգելէ:

- պիտի ուղարկուեն Արարատ հայ դեկավարներ, որոնց պիտի աջակցէ հրա- մանատարը:
- յետագայ գործունեութեան համար կկազմուի մի խառն մարմին հայ-քիւրդ պարսիկ. գործերին ընթացք տալու համար:-

Վահանը²⁴ և ուղարկուած մարդիկ: -

Արդեօք այս թոյլութիւնը օգտաւետ էր թէ վնասակար, դա՛մ էր, թէ անկեղծ գործակցութեան փորձ դժուար է ձշտելը, և դա հետաքրքիր էլ չէր 1930 սկզբին, որովհետև այդ ժամանակ առաջին անհրաժեշտութիւնն էր մի մարդ հասցնել Արա- րատ, որ կպահանջէին շարունակ և մենք անկարող էինք սահմանների ամուր փակ- ման պատճառով հայերի հանդէպ:-

Թեմուրդաշը այդ դիւրութիւնը կտար հանձնարարելով Զաֆար Դովլեին ծածու- կէն թոյլ տալ անցնելու ճամբածս անձանց:-

Պարսիկները իրանց խոստումը կատարեցին, թոյլ տուին և իրանց օթոներով և սպայի ուղեկցութեամբ անցկացրին սահմանը Վահանին և ընկերներին:-

Վահանին տրուած էին հետևեալ խնդիրները լուծելու.

Քանի որ Արտաշեսը ձերբակալուած է նա պիտի փոխարինէ նրան, իրան դնե- լով Արարատի կառավարութեան տրամադրութեան տակ: Նա պիտի ջանար նշա- նակուիլ հրամանատար քրդերի վրայ ի մասնաւորի Արարատից հիւսիս շրջաննե- րում:-

Իւր հիմնական նպատակը պիտի լինէր, քանի որ Իհսանը չէր կարողացած հա- մախմբել բոլոր ցեղերը, ջանալ թշնամի ցեղերը հաշտեցնել և միացնել թուրքերի դեմը:

Քանի որ կան և կարող են շատանալ այնպիսիք, որոնք աւագակային կամ քա- դաքական նպատակներով կջանան պարսկական հողամասերը խլրտել. առաջն առնել դրան և ընդհակառակը պարսկական քրդերին կապել Արարատի հետ և ապահովել Արարատի թիկունքը:-

Քանի որ Պարսկաստանը թոյլ չի տայ մեծ քանակութեամբ հայ կուռղներ Պարսկաստանից կենտրոնացնել Արարատ. պետք է Վահանը այդ ոյժերը ջանալ կենտրոնացնել Հայաստանից, հոն եղած մեր ընկերներից և փախստականներից:-

- վերոյիշած կետը իրագործելու համար, պիտի համարել Արարատին, որ նրանք չսահմանափակուին Արարատի հարաւը ընկած լանջով, այլ պիտի միացնեն իրանց և հիւսիս ընկած լանջը մինչև Արաքսը ձեռք բերելով որից յետոյ իրանց բաղձանքը՝ ունենալ հայ բազմաթիւ զինուորներ հնարավոր կդառնայ: -

Լիազորել մեկին իրանցից և կամ ինձ խօսելու Արարատի կառավարութեան կողմից:-

24 Խոսքը Հայաստանի Հանրապետության բանակի կապիտան Վահան Գալստյանի (Սև Վահանի) մասին է (1879-1956): Արարատում Վելիբեկ կամ Վելի ծածկանունով այդ գործչի մասին տես **Ղազար**, Կապիտան Վա- հան Գալստեան (Սև Վահան), «Աւօ, Յեղափոխական պայք», Գ. շարք, Հայէպ, 1962, թիւ 9 (33), էջ 275-276:

Բացի յիշեալներից որոշուեց և գինւորական գործողութեանց ծրագիրը, որին համամիտ էր և Թեմնորդաշը. ընդհանուր գծերը ինքը ցանկութիւն յայտնած լինելով:-

Քանի որ Արարատը միայնակ դժուար թէ կարողանայ ընդմիշտ դիմադրել հաւաքուող գորքերի դեմը նա պիտի ընդարձակի իւր գործունէութեան շրջանակը նոր ապստամբական վայրեր ստեղծելով հետևեալ ձևով:-

Վահանը ջանալով ստանալ լիազօրութիւն Արարատից, և ստանալով ոյժ, պիտի անցնի Արարատի հիւսիսային երեսը և ձեռք բերէ Գեալբաբանի, Մօտան Կօլքանի, Բայդլի, Գիլոցի, խըղըր աղա, շամկանի ալօ-մըհօյի ցեղերը 2300 վրաններով.

Նրանց միացնելով Արարատի իշխանութեան պիտի անմիջապէս շահագրգռէ այդ աւազակաբարոյ ցեղերը նրանց թշնամացնելով «Արալըլիների» մեջ բնակուող Թաթարների հետ, և Դաշբուռուն մինչև Շահթալպի ընկած թաթար-թուրք ազգաբնակչութիւնը հեռացնէ կամ բնաջնջէ այդպիսով մինչև Արաքսը ապահովէ յօգուտ Արարատի.

Ամրանալ Դաշբուռունում, թիկունքից ապահոված լինելով սպառնալ Մարգարա-Իգդիր գծին.

Բարձրանալ Օռգովի անցքը, ամրանալ և կտրել Իգդիրը Բայազեթից.

Սինակ լեռների բոլոր անցքերը Չինգիլ և այլն բռնել և ամրանալ Կողբում:

VII. Երբ Կողբ-Իգդիր ձանապարհը վտանգուեց, գրաւել Իգդիրը և Սուրմալու մինչ Արաքս մաքրել թաթարներից:-

Երբ Վահան հասնի Արաքսին Դաշբուռունի և Կողբի կողմից պիտի կապուի Ալագեագի հետ և այնտեղից սասունցիներին պիտի կանչէ Սուրմալու և Արարատի կռուողների կորիզը պիտի դառցնէ:-

Ահա այս էր Արարատի հիսիսի ծրագիրը: Որով կտեսնենք որ գլխաւօր առանցքն է Արարատը սահմանակից դառցնել Հայաստանին և նրա ձանապարհները կտրելը Կարսից եկող գորքերից:-

Արարատի հարաւը. –

Արարատի հարաւը գտնուող 6 ցեղերի համար որոշուեց հետևեալը:-

Ամեն կերպ ջանալ հաշտեցնել կօթան աշիրեթը և միացնել ապստամբներին,

II. Պաշտպանողական ձակատ կազմել ձահիձները սահման ունենալով մինչև Արծախ:-

Դիւրացնելու համար Վահանի գործը հարաւից բարձրանալ Օռգով, Չինգիլ և կտրել Բայազեթը Իգդիրից:

Սպառնալ Սինակի լեռներից Բայազեթ – Դաշլի Չայ – Ղարաքիլիսէ ձանապարհին և սպասել Ալաղաղի գործողութեանց:

Ուշադրութիւն և ոյժ տալ Ալաղաղի գործողութեանց:-

Արարատի արևելքը.

Արարատի արևելքը պարսից հողերի մեջ եղած 8 ցեղերը առանձին ձակատ չունենալով, նրանք

- պիտի միացուեն և նկատուեն պահեստի ոյժ թիկունքը պաշտպանելու Իհսանի և Վահանի
- թուրք-պարսիկ գորքերը չթոյլ տալ զարնելու Արարատը թիկունքից:
- նրանցից ոյժեր հանել և տրամադրել Կարօին²⁵ անցնելու Թանդուրեքով Բայազեթի թիկունքը:

25 Ինքնությունը պարզել չհաջողվեց, միայն հայտնի է, որ գործում էր «Իբրահիմ» ծածկանունով:

Թանդուրեք Ալադադ.

Հիմք ունենալով Արարատի քրդերը և Կարուն հայդարցի ցեղերը, նրանց օգտագործել Թանդուրեք-Ալադադ-Կըլըչ-Գեադախուկ գիծը բռնելու: -

Այս նպատակով Արարատը կձամբէ մի զինուորական ղեկավար և մի կազմակերպող Կարօին հետևեալները ասելու.

Առանց Բայազէթին գրավելու փորձ անելու նախ մտնել նրա թիկունքը Աբադալի քրդութիւնը ոտքի հանել

Ոտքի հանել Ալադադ Զիլան և այդպիսով կտրել Բայազէթի ձամբաները Վանից և Արձեշից.

Տարածուել մինչ Կըզըլ-Գեադակ և փակել Արձեշ - Մանազկերտ - Ղարաքիլիսէ ձամբան.

Ալադադից զարնել Տաշլի չայ նախապես լուր տալով Արարատին,

Երբ Տաշլի չայ վտանգեն՝ Արարատը պիտի շարժի հիւսիսից Բայազէթ, և Թանդուրեք Ալադադ ոյժերը նոյնպես Բայազէթում պիտի միանան:

VII. Բայազէթի գրավումից յետոյ երեք ոյժերը Վահանը հիւսիսից Իհսանը Ալազկերտի հովտով և Կարօն Կըլըչ Գեադակով պիտի բռնեն Բահար Գեադախուկը և որից յետոյ ապստամբական նոր ծրագիր պիտի կազմուի, նայած թէ ինչ արձագանք կտայ այս շարժումը քրդերի և թուրքերի մեջ:-

Ծրագրի ընթացքը.

-Այս ծրագիրը կ[ը]նդունուի մանր փոփոխութիւններով և Արարատի կառավարութեան կողմից և այդ ծրագրի գործադրման համար հետևեալ գործնական որոշումները կտրուեն.

Դեպի Սուրմալու հիւսիսի ծրագրի գործադրութիւնը կհանձնուի Վահանին (Վելի). Արարատի պաշտպանութիւնը Բրօին.

Ալադադի գործողութիւնները Հիւսեյին փաշայի²⁶ որդուն և Կարօին (Իբրահիմին).

Իսկ ընդհանուր հրամանատար Իհսան Նուրի:-

Մանուկը.

- Այս ծրագրի գործադրմանը մեջ մեծ դեր է խաղացել Մանուկը²⁷, որին ծանօթ էր ծրագրի էութիւնը, այս բժիշկը մեր ընկերներից է, բայց և շատ մտերիմ Զաֆար Դօվլէին և նրա կնքահայրն է, քանի որ նրան հրահանգուած էր մեզ աջակցել ծածուկէն, Զաֆար Դօվլէն կնշանակէ Մանուկին իբր զինուորական բժիշկ սահմանի վրայ հանձնարարելով կատարել իւր գաղտնի հրահանգները, Մանուկը և իւր ազդեցութեան տակ ընկած պարսիկ սպաները գործի սկզբում կատարեցին այն բոլորը ինչ ծրագրուած էր Արարատի կողմից, բայց ի վերջոյ յայտնի դառնալով հեռացուեցին իրանց պաշտօններից:-

Ապստամբութիւն

- Արարատի շուրջը ապրիլ ամսից գորքեր կկենտրոնային գլխաւորապես Բայազէթ, Ղարաքիլիսէ, Իգդիր, պարսիկներ ևս գորքեր կհաւաքեն Մաքու, Խոյ և ապրիլ ամսից փաստորէն պարսպուած էր Արարատը.

Ընդհարումները շարունակ կլինէին թուրք գորքերի և ապստամբների միջև, բայց տաճիկները չէին կարողանայ զարգացնել զինուորական գործողութիւնները մարտ - ապրիլ ամիսներին ձիւնով ծածկուած լինելով Արարատի անցքերը:

26 Խոսքը Մուշի հայության դահիճ Քոռ Հուսէյն փաշայի մասին է:

27 Մանուկը Իրանի դաշնակցական շրջանակներում հայտնի դոկտոր Մանուկն է՝ Մանուկ Վարդանյանը, ծնունդով՝ գլումրեցի:

Պարսիկները պարզ հանդիսատեսի դեր կկատարեն այդ երկու ամիսներին: Վելու, Իբրահիմի և Մանուկի Արարատի ապստամբներին հետ տեսնուելուց յետոյ մայիս կեսին, և վերջիշուած ծրագիրը ընդունելուց յետոյ, Արարատը նոր կենդանութիւն կստանայ և կլցուի յոյսով թէ մեր և թէ պարսիկների կողմից, և անմիջապէս կանցնի առաջարկուած ծրագրի գործադրմանը և հետևեալ արդիւնքներին կհասնին:

Մանուկի և Իբրահիմի դերը Արարատի արևելքում

- Արարատի կառավարութիւնը Կարօն և Հիւսէին փաշայի որդիներին կձամբէ դէպի Բայազէթից հարաւ ընկած շրջանները. Կարօն մի առժամանակ կանցնի պարսից քրդերի մէջը իսկ Հիւսէին փաշայի որդիք ուղիղ Ալադաղ - Մանազկերտ. Կարօն կպատահի Մանուկին - որ պարսից պաշտօնիւն էր և հանձնարարութիւն ուներ ինչպէս մեր և նոյնպէս Զաֆար Դօվլէի կողմից.

Մանուկ իբր պարսից պաշտօնէալ և միաժամանակ իբր հայ կարճ ժամանակուով կարողացած էր Պարսկաստանի քրդութեանը միացնել և համակիր դառննել Արարատի ապստամբներին: Խալըկանցի Խալըտ աղան, որ տարածայնութիւն ուներ պարսից յետ կկարողանայ հաշտեցնել կառավարութեան հետ և նրա որդուն ուղարկել Թարիզ Զաֆար Դօվլէի մոտ տեսութեան: Այսպիսով պարսից բոլոր քրդերին կկարողանայ բարեկամ դառննել իշխանութեանը: Երկրորդ նրա գործը կդառնայ այդ քրդութեանը կապել Արարատի ըմբոստներին և խօսք առնել, որ Արարատի թիկունքը պիտի պաշտպանեն եթէ թուրքերը փորձ անեն անցնել պարսից հողերով Արարատների թիկունքը:-

Երրորդ խօստուով կաննէ, որ Ալադաղի և Բայազէթի կռիւների դէպքում, նրանք պիտի ձամբեն օգնական ոյժեր և ասպատակային խմբեր:

Եւ չորրորդ, որ պիտի Արարատ փոխադրեն հաց և առևտուր անեն նրանց հետ, որի փոխարժեքը պիտի ստանային Մանուկից:-

Այս գործողութիւնները կկատարուեն մայիս - յունիս սկզբները և ամենադժուարին խնդիրը լուծած էր Մանուկը կարճ ժամանակուով, որ երկար տարիներ անհնար էր եղած լուծել պարսից իշխանութեան և Արարատի ապստամբների կողմից.

Այդ համաձայնութեամբ պարսից թոյլ ոյժերը առանց միջամուլս լինելու կռուին, պիտի կարողանային Արարատի արևելքը ընկած քիւրդ 3100 տնօր ցեղերի միջոցով պաշտպանել թուրքաց ներխուժումից Արարատների պարսկական մասը.

Ապստամբները պիտի ապահով լինեն իրանց թիկունքում, վստահ որ իրանց ցեղակից աշիրեթները չպիտի թոյլատրին թուրքերին անցնել իրանց թիկունքը և ոչ էլ իրանց թիկունքում պիտի տեսնեն պարսից զորքերը, որոնց չէին հաւատայ:-

Պարենաւորման պատասխանատուութիւնը պիտի ընկներ, ոչ թէ պարսից, այլ անհնազանդ քրդերի վրայ, որով քաղաքական բարդութիւններ չպիտի ստեղծուեր, քողարկուելով պարսից համակրութիւնը:

և վերջապէս ապստամբները պիտի ստանային և օգնութիւն Բայազէթի, Ալադաղի ձակատներում որտեղ նրանք թոյլ էին:

Այսպիսով, շնորհիվ պարսից (Զաֆար Դօվլէի, Սուրենի²⁸ և Մանուկի) Արարատը արևելքից ապահովուած էր մայիս վերջերից - յունիս 15ը:-

Իւտուֆէ Արդալ.

Մանուկ խրախուսուած այս յաջողութիւններից կլրջնաբանակէ իւր գործունեութիւնը. նա կկանչէ իւր մօտ հայդարցոց պետերից Իւտուֆէ Արդալին, նրան դրամ կտայ 100 \$. առձեռն և կխրախուսէ, որ ոտքի հանէ Սարայի, Աբադայի, Թանդուրեքի քրդերը և ամբողջ հայդարցի ցեղը. Իւտուֆէ Արդալը համաձայն էր քրդական դատին և ընդառաջ կ'գայ Մանուկի առաջարկին, մանաւանդ որ նրան յայտնի էր, որ Մանուկի դրամը Զաֆար Դօվլէի դրամնէր, և Մանուկի բերնով կխօսեն ոչ միայն

28 Ինքնութիւնը չհաջողվեց պարզել:

հայերը, այլև պարսիկները: Նա անմիջապես գործի կանցնի և Մանուկը նրան ընկերացնելով Իբրահիմին (Կարօն) կձամբէ դեպի երկիր Աբաղայ:

–Այդ կպատահի յունիս 19-ին: Այս յաջողութիւնը ի վերջոյ պիտի դառնար անյաջողութեանց մայրը և գերեզման պիտի տանէր, ոչ միայն իրան՝ Իսուֆէ Աբդալին, այլև պիտի վտանգէր Մանուկին և Զաֆար Դօվլեին և պիտի փոխէր ամբողջ պարսից քաղաքականութիւնը, որ պատահեցան Իսուֆէ Աբդալի անխոհեմութեան պատճառով:

–Այս ազդեցիկ ցեղապետը, որպեսզի աւելի ազդեցիկ դառնայ և այլ ցեղերի վրայ ամենուրեք կ'գրէ գրաւոր նամակներ, թռուցիկներ, թէ ինքը Զաֆար Դօվլեի հրահանգով կշարժի. նա ևս համամիտ է Քրդստանի անկախութեան, եթէ դուք ցեղերդ ինձ չհետևեք և չմտնեք երկիր թուրքերի դեմ կռուելու, վայ Ձեզի, կվերադառնամ բոլորիդ կկոտորեմ:

–Այս նամակները կլրջնկեն թուրքերի և պարսից իշխանութեան ձեռը և խնդիրը մարեցնելու համար նրան կձերբակալեն, բանտը կզգցն և բանտում թունաւորելով կմեռցնին ասելով որ փորհարինք ուներ բայց խնդիրը դրանով չի փակուի, թուրքերը փաստ կծառայեցնեն այդ գրութիւնները հրամանատարութեան մեղսակցութեանը ապստամբութեան խնդրում, որը պիտի հանգէր իբր պատճառներից գլխաւորի թուրք գորքերի պարսից հողը մտնելուն և հրամանատարութեան փոփոխուելուն և քաղաքականութեան փոփոխուելուն:

Այս չարիքները որ պիտի լինեն մի երկու ամիս յետոյ, իբր հետևանք Իսուֆի անխոհեմութեան, բայց մայիս յունիս, յուլիս ամիսներին, նրա անխոհեմութիւնը իւր դրական արդիւնքները տուեցին, միամիտ քրդերը հաւատացին նրա կոչին, Սըլանցի Օսման բեյը ոգևորուած սկսեց շարժումը, անցաւ 120 հոգով տաճկաց սահմանը և մինչ Սարայ անիշխանութեան մատնեց. Մագրկցի Շարաֆ բեյի որդին Օսման – Հասօն ևս սկսեց շարժման և Բարդեղիմետի վանքի պահականոցը ջարդեց և վանքը գրաւեց: Իսկ Իբրահիմը՝ Կարօն մտնելով Աբաղայ, հոն գտաւ տրամադրութիւնը նպաստաւոր, նրա շուրջը հաւաքուեցին քրդերն և Աբաղայի պահականոցները վերացուեցին և զորքերը թշուեցին մինչև Բերկրի, այնպէս որ մայիս յունիս ամիսներին Բայազէթից հարաւ, Թանդուրեքից սկսած մինչև Բարդուղիմետս վանքը քրդերի ձեռքն էր, և Վանը կտրուած էր Բայազէթից:–

Մինչ այս նպաստաւոր պայմանները կստեղծուին պարսից սահմաններում տեսնինք ինչ կանցներ կդառնար Արարատներում և Ալաղաղում:–

Կորխան և Վահան

– Վահանը (Վելին) նշանակուելով Սուրմալուի ձակատի հրամանատար իւր կենտրոնը կլրջնդունի Կորխանում: Նրա առաջին կդառնայ ցեղերին միացնել և նրանց հարձակման մղել. բայց մեծ դժուրութեան կհանդիպի մանաւանդ ղրզըլ–բաշօղլու ցեղի կողմից, որը պահանջ կդնէ նախ բերել 200–300 հայ զինուոր և յետոյ հարձակման դիմել: Այդ խօստումը կլինի պայմանով, որ գոնէ մինչև Արաքս դառցնեն իրանց ձակատը. քրդերը աւելի գրաւուած Արալըխների թալանով կհամաձայնին իջնել լեռներից դեպի Արաքս և մինչև Արաքս – Դաշբուռունից – Արալըխները քանդել և զորքն և թաթար ազգաբնակչութիւնը գցել Արաքսի ձախ ափը Խորհրդ. Հայաստան. բայց աւարով տարուած քրդերը չեն զարգացնէ իրանց յաջողութիւնը 3000ի մոտ տաւարները կքշեն լեռները և դրանով կզբաղին, փոքրաթիւ մի խմբակ մնալով Վելու տրամադրութեան տակ:

Վահանը յաջողած էր իր ծրագրի առաջին և երկրորդ մասի իրագործմանը. ա) կռուեցրած էր քրդերին թուրքերի դեմը և հասած էր Արաքսը մինչև Դաշբուռուն և կվտանգէր Սարգարա – Իգդիր ձանապարհը, բայց չէր իրագործուած իւր երրորդ և չորրորդ նպատակը բռնել Սինակի լեռան անցքերը և կտրել Սուրմալուն ու Կարսը Ալաշկերտի հովտից և չորրորդ գրաւել Սուրմալուն և ստանալ Հայաստանից ոյժեր:

Նա կարող էր իրեն ենթակայ ոյժերով աւելի անհանգստացնել, քան բռնել կիր–

ձերը, որոնք խիստ կենսական էին թուրքերի համար. նրա ճամբած խմբերը կանցնեն Մինսկի լեռները մինչև Կողբի մոտերքը և մի քանի անգամ, բայց ոչ դիրքեր պահելու և ոչ էլ երկար սպասելու սովոր չլինելով կտողնին և յետ կվերադառնան իրանց աւարով:

Իգդիր

- նոյնը կպատահի և Իգդիրում. քրդերը խրախուսուած, որ կարող են հարձակումներ կատարել կհարձակեն Իգդիրի վրայ ինչպես Դաշբուռունից, նոյնպես Օռգովի կողմից, գորքը կնահանջի, և քրդերը կմտնեն Իգդիր Մաւա, կմտնեն Իգդիրի փողոցները, հրդեհ կ'գցին. գորքը խուճապահար կանցնի Մարգարի կամուրջը Հայաստան, ուր կհիւրասիրուեն, իսկ քրդերը փոխանակ իրանց յաջողութեանց օգտուելու թալանով կվերադառնան իրանց որջերը:–

Փաստօրեն Օռգով, Չոր, Չինկիլ կիրճերը անցքերը վտանգուած էին թուրքերի համար, և Սուրմալուն մատնուած էր աւերութեան, բայց չկային ոյժեր կանոնաւոր, որ բռնեին այդ անցքերը և տեր դառնային Սուրմալուին:

–Պահակ մնացող ոյժեր պիտի լինեին հայերը, որի համար երկու ուղղութեամբ Արաքսի ձախ ափը կճամբուին քիւրդ խմբեր հայ կամաւորներ բերելու համար: Մի խումբը խուսափելով սահմանապահ ռուս զորքից կհասնի Դաւալու²⁹, չգիտնալով թե որը բօլշևիկ է, որը մեզնից, հրապարակաւ կյայտնեն, թե արեք օգնութեան և ուրիշ խմբերոնց յետոյ կվերադառնան իսկոյն:

Իսկ միւս խումբը կանցնի Արաքսը Սարդարապատի ուղղութեամբ, որպէսզի հասնի Արագած սասունցի փախստականներին լուր տալու որ միանան իրանց, բայց կնկատուին գորքերի կողմից և կհետապնդուին և առանց հասնելու Արագած, կհարկադրուին նահանջել և Անիի ուղղութեամբ Ախուրեանը անցնել իրանց հետ տանելով և թալան և կարծեմ սպանելով պատահական կերպով հայ գիւղացիներ:

Այսպիսով անյաջող կանցնեն Հայաստանի հետ կապուելու փորձերը և այստեղից ոյժ ստանալու փորձերը: Բայց այս արշաւանքները ծածուկ չեն մնայ հայերից, բերնէ բերան չափազանցուած լուրեր կշրջեն Հայաստանում, թէ Դրօս, Ռուբեն Արաբատն են կուզեն որ հայ ժողովուրդը ոտքի ելնի և արշաւէ Արարատը իրանց միանալու համար: Էս ու գիս կնկնի փախստականների և ժողովրդի մեջը. կուզեն իսկութիւնը հասկանալ, կուղարկեն մարդիկ Պարսկաստանի և Արարատի ուղղութեամբ, հասկանալու իսկութիւնը, բայց արդեն ուշ կլինի, ճանապարհները պինդ փակուած էին, ինչպես ռուսների, նոյնպես թուրքերի կողմից: –

Ռուսները

Թուրք զորքերի նահանջը Մարգարայ, քրդերի Արաքս անցնելը, և շարունակական թնդանոթի և հրացանի ձայները Արաքսի աջ ափում արթնացրած էին հայերը և աւելորդ յոյսեր ներշնչած, ինչպես և արթնացրած էր ռուսներին, որոնք մտահոգ էին հայերի ներքին ուրախութիւնից:

–Այս դէպքերը որ տեղի կունենային մայիս, յունիս, յուլիս ամիսներին կգուգադիպէին Անդրկովկասի և Հայաստանի մեջ եղած հակակոլխոզական շարժումներին, որ մեծ ծաւալ էին առած. յայտնի է որ հայեր ու թաթարներ իրարու միացած երկրի այն ծայրերում արիւնահեղ պայքար կնդեին բօլշևիկների դեմ, այժմս Արարատի, Սուրմալուի շարժումների և հակաբօլշևիկ շարժումների մեջ մի կապ որոնելով ընկած էին թիւրիմացութեան մեջ, որ իբր Արարատը հենարան կուզեն դառննել դաշնակները Հայաստանում յեղաշրջում առաջ բերելու համար: Գուցէ այս մտածումն էր պատճառը որ հետևեալ փոփոխութիւնները առաջ բերին Հայաստանում.

ա). հայ զորքերին ամբողջ հեռացրին Ղազախ և վրացական ու ռուսական զոր-

29 Ներկայիս Արարատ գյուղը:

քեր բերեցին Հայաստան.

բ). Լուկաշին քաղաքում³⁰ փոխադրեցին աէնոպլաններ և հանգարը հոն դառնուցին.

գ). Արաքսի և Արփա չայի երկայնքով մշտական աէնոպլանային հետախուզութիւնը կազմակերպեցին թէ ռուսական և թէ տաճկական ափերում:

դ). ռուսական նոր զօրքեր բերեցին պատրասկելով զորախաղը, որ օգոստոսից լինելու էր:–

ե). [անընթ.] ապաստանած թուրք զորքերին գենքերը դառնուցին և յետ ճամբեցին.

զ). Կարսի զօրքը և պարենը փոխանակ Կաղզուան–Կողբ–Իգդիր գծով, Կարս–Ալեքպոլ–Մարգարայ երկաթուղագծով թոյլ տուին ան[ցն]ելու: –

է). մի հեծելազօրք 4–700 անցան Սուրմալուի սահմանը:

Այսպիսով Արարատը փոխանակ Հայաստանի կողմից օգնական ոյժեր առնելու, նա ստացաւ թշնամի ոյժեր հանձինս բօլշևիկ օգնութեան և հետախուզութեան, և նրա ակտիւ օժանդակութեան թուրք զորքերին:–

Յուլիս օգոստ. թուրքերը:

– Թուրքերը ունենալով բարիացակամութիւնը բօլշևիկների կարող էին Սուրմալուի կողմից հակայարձակման դիմել և յետ վերցնել գրաւած դիրքերը: Արդեն քրդերը գրաւած դիրքերը պահելու սովորութիւն չունեն, Սուրմալու պարսպ էր եկան և հաստատուեցին, և որպէսզի Արարատը նորից չվտանգէ Իգդիրը, Օռգովի, Ջոդի, և Չինգիլի անցքերը նրանք 6 աէնոպլաններով նախ լաւ մմբակոծելուց յետոյ Արարատի վրայ եղած օբաները հարձակում կատարեցին յուլիս կեսերին Կարախ Թեփեի բարձրութիւնը և գրաւելով հոն հաստատուեցին: – Արարատի այդ բարձրութիւնը որ 10.000 ոտնաչափից բարձրէ 800 զորք տեղաւորեցին և երկու թնդանոթ և շուրջը պատնէշներով ամրացրին:

Այդպիսով ոչ միայն Իգդիրն էր ապահոված, այլև Օռկովը և Սինակ լեռան վրայ այլևս քրդերը ազատ չպիտի շարժեին, իրանց թիկունքում ունենալով Կարախ Թեփեն:

Իսկ արևելքից Կողսանը, որտեղ կենտրոնն էր Վահանի, այլևս վտանգուած էր, և Առալըխները վերևից պաշտպանուած լինելով՝ քրդերի երթևեկը մինչև Արաքս–Դաշբուռուն վտանգուած էր:–

Կարախ թեփեն պետք էր յետ առնել, փորձեր եղան՝ նրա զորքի ջուրը կտրեցին քրդերը, նեղեցին զորքին, բայց չհամարձակվեցին ցած իջեցնել, մանաւանդ որ փամփուշտի մեծ ծախս պիտի անեին, որ չունեին: Կարախ թեփեի վերագրաւումը անհնարին դառնալով Արարատի հիւսիս գտնուող քրդերի հոգեբանութիւնն էլ փոխուեց, նրանք դառանալով Արարատի հիւսիս գտնուող քրդերի հոգեբանութիւնն էլ փոխուեց, նրանք դառանալով չափաւոր մի մասը ջանաց համակերպիլ թուրքերին և Սինակ գալով թուրքերին աջակից դառան, միւս մասը երկու Մասիսների մեջը բարձրացան չեզոք դիրք բռնելով:

Կենտրոնը մայիս – օգոստոս. ամիսներին:

Մինչ ռուսական կողմի Արարատը կենաց և մահու պայքար կնդեր, Կենտրոնը արևմտեան և հարաւային թուրքական Արարատը իւր ինքնապաշտպանութիւնը կաներ Բայազէթ – Ղարաքիլիսէ կողմերից եկող զորքերին. այդ կռիւների շարանը երկար է, բայց աւելի խիստ կերպարանք կառնեն կռիւները յունիս 11 – 22ը, երբ թէ աէնոպլաններով, թէ թնդանոթով, թէ հետևակ և հեծելագորքով կնեղին կենտրոնը Օրթուի և Այբայի կողմից: Թուրքերի ջանքերը ի զուր կանցնին. նրանց աէնոպլաններից 2ը վար կիջեցնին, ճահիճների և Արարատի մեջ անցած զորքերը կգերուին և թուրքերի բոլոր փորձերը անյաջողութեան կմատնուին:

³⁰ Թերևս՝ Լուկաշին ավանում:

Թուրքերը կյառաջանան միայն պարսից հողերով Այբայի կողմից Արարատի թիկունքը անցնելու, բայց հոս կհանդիպեն Սաքանցի ցեղի դիմադրության և պարսիկների արգելքին, և թուրքերը հարկադրում և կկանգնին: Ինչպես ծրագրած էին, Կենտրոնը իր խնդիրը լրիս կլուծէ մինչև օգոստոս ամիսը նա կմնայ ամուր և ոչ մի դիրք չի տայ և կսպասէ Արարատի շարժումներին որ իր կողմից հարձակման դիմէ: Բայց նա անտեղեակ է եղած ժամանակին այնտեղի շարժումների բնույթին և չի կարողացած զարգացնել և օգտագործել իր դիրքը, ըստ Վահանի և քրդերի տեղեկությանց. յունիս վերջերին և յուլիսի գորքերը քաշուած կլինեն Արարատից և կենտրոնացած Ալադադի և Արճեշի վրայ, այդ ժամանակամիջոցում Կենտրոնը պարապ է նստած եղել, որ կարող էր կռուի ելքը փոխել ըստ տեղեկությանց արարատցիների:–

Այժմ տեսնենք ինչ կանցներ Ջիլանում: –

Ջիլան մայիս յունիս յուլիս ամիսներին

Վերնն ասացի, որ Իբրայիմ և Հիւսեյն փաշայի որդիքը, Վահանը, Ռատուլը³¹ և այլք մայիս վերջին կձամբուին Ալադադ շարժում անելու Արարատի գորքի թիկունքում:

– Նրանք կ'գնան Ալադադ երկու ուղղութեամբ, մինը պարսից հողերով Իբրահիմը դեպի Աբադադ – Ալադադ, միսը ուղիղ Ալադադ: –

Յունիս սկզբին Արարատի գործիչները կանցնին Ջիլան, հոն կար ուժեղ թուրքական պահակ 400 հոգի. յունիս 22-ին կհարձակին և կջարդին տեղական ժողովրդի միջոցով. կվերցնին փամփուշտ և 280 գերի, և հրացաններ և կզինեն տեղացիք. և հասնելով Վանա լճի հիւսիսային ափը կկտրեն Բերկրի-Արճեշ ճանապարհը, որով Վանը կտրուած էր հիւսիսից Արճեշի և Ալաշկերտի հետ կապուելուց.

- –յունիս 19-ին Աբադայի կմտնին Իբրահիմը, հոն եղած 35 զինուորները կփչանան և կցրուին, կ'գործին Վան – [անընթ.] – Բայազեթ ճամբան.
- յունիս 22-ին կառաջանան դեպի Բերկրի, այստեղի գորքերը յետ կքաշուեն դեպի Թիմար, տեսնելով որ սպառնալիքի տակ են թէ Արճեշի և թէ Աբադայի կողմից, մանաւանդ որ թիկունքն էլ բռնուելու վտանգ էր: –
- Յունիս 26-ին Պարսկաստանից մինչև Արճեշ քրդերի ձեռքն էր և սրանք կտրած լինելով Վանը Բայազեթ Ղարաքիլիսեից կկենտրոնան ամբողջը Արճեշի տակը:–

Նոյն ժամանակամիջոցում Օսմանը (Մըլանցի) կանցնէ դեպի Սարայ և կասպատակէ իր 120 մարդկանցով այնպես որ թուրքերը կքաշուին Վան-Թիմար.

- յունիս վերջերին Մահմուդէ Բիրդիին³² կանցնի Մանազկերտ, Պատնոս, հոն ոտքի հանելու ժողովրդին և շարժուելու դեպի Դութախ-Կըլըջկիատակ, բայց քրդերը զինաթափ շարժուելու տրամադրութիւն ցոյց չեն տայ:
- նոյն ժամանակ յունիս կեսերին մի ասպատախումբ Վանի լճի արևմտեան ափով կհասնի Սիփան և հոն կ'գերէ 40-նց թուրք պահակախումբը.
- յուլիս 4-ից յարձակում կլինի Արճեշի վրայ, հոն եղած ուժեղ պահեստները գրաւելու և գորքը զինաթափ անելու համար. Արճեշը կառնեն աէռօդումի մեջ 4 աէռօպլան կվառեն, կխլեն 150,000 փամփուշտ, զենք և գնդացիներ, և կջանանան միջնաբերդում ամրացած գորքերին ևս փչացնել, բայց գորքը հերոսական դիմադրութիւն ցոյց կտայ պաշարուած 7 օր – այս ընթացքում, քրդերը կսպառեն իրանց ձեռք բերած փամփուշտները, այդ ժամանակ օգնական գորք կ'գայ Վանից նաւերով ցամաք իջնելով,– քրդերը կթողնին պաշարումը և կքաշուին Ջիլան. իրանց հետ տանելով գերիներ,

Այս փայլուն կռիւերի ժամանակ քրդերը մռռացել էին երկու բան. մին որ պիտի Արարատին լուր տային իրանց գործողութեանց մասին, որ նա համաձայնեցներ իր քայլերը,

31 Քուրդ հրամանատար:
32 Ինքնութոյնը պարզել չհաջողվեց:

- երկրորդ որ նրանց նպատակը չէր Արձեշը գրաւելը այլ պետք է Տաշլի չայ, Ղարաքիլիսէ երևային որ Արարատը զարներ Բայազէթ:

Այս անտեղեկութեան պատճառով Արարատի ամբողջ ոյժերը կկենտրոնանան Ալադաղի վրայ Արարատի առաջ թողնելով մի վարագոյր և ամբողջ ոյժով կըլնկնին³³ Ալադաղի ապստամբներին, նրանց կ'օգնէ և կօթան աշիրեթը, որը ճակատագրական դեր կկատարէ քրդերի բնաջնջման մեջ. այս ցեղը, որ սկսուեր Արարատի ապստամբութեան, իւր քենից դրդուած հանդէպ շեյխ Աբդուլայի³⁴ և Ռասուլի, ոչ միայն զօրքին կօգնէ և քրդերին ինքը կջարդէ չխնայելով կին և երեխա:

Ապստամբները փամփուշտ չեն ունենայ. կուղարկեն Իբրահիմին և Վահանին Պարսկաստան փամփուշտ խնդրելու, իսկ իրանք օրհասական կռիւ կնդին և մեծ մասը կփչանայ:

Յուլիս վերջերին փոքրիկ կռիւներ կային, բայց Վանի ճանապարհները բացուած էին:

Կենտրոնը օգոստ.

Չնայելով Արձեշի անյաջողութեան, Արարատը երբ կհասկանայ խնդրի էութիւնը, իւր ոյժերը հաւաքելով կհարձակի Վելու (Վահանի) առաջնորդութեամբ Բայազէթի վրայ ուշացած էր այդ հարձակումը բայց թէ մասնակի յաջողութիւն կունենայ. կլիսեն Բայազէթի բերդերից երկուսը Բումսօ Սօր, Բումսառաշ և կայարանը: Կ'գերին մի թնդանօթ, միթրայգներ, հրացան, փամփուշտ և գերի զորքերին լծելով *абыховский полевая пушка*-ին կտանեն դէպի Արարատ. բայց գործը չեն լմնցնէ, քիւրդ ղեկավարներից մինը սպանուելով Բումսառաշում, կռիւը կիսատ կթողնին և քաղաքը կազատուի. թուրքերին կ'օգնէր և աէռօպլանը, որը չի կարող ետ վերցնել թնդանօթը, որովհետև փոխադրողները թուրք զորքերն էին գերևարուած:-

Օգոստոսից յետոյ: Ռուսաստանը և Պարսկաստանը:

Օգոստոս ամիսը ոչ այնքան կռիւների շրջան էր, որքան պատրաստութեանց և կռուի կազմակերպման շրջան: Քրդական այս դիմադրութիւնները մտահոգիչ էր դառած ոչ միայն թուրքերի, այլև բօլշեիկների համար. կարծես նրանք իրօք համոզւած էին թէ «Լօուենին»³⁵ գործն է», և անգլիական մատը կայ այս խնդրում: Այդ ենթադրելու պատճառ էլ ունենին, մանաւանդ որ այդ նոյն ժամանակամիջոցում օգոստոսից ծագեց Լօռեստանի ապստամբութիւնը և Շիրազի խռովութիւնները, որ կհաւաստենի պարսիկներին իսկ, որ անգլիացոց խաղն էր:-

Գուցե այս էր պատճառը, որ ոչ միայն թուրք, այլև բօլշեիկ կառավարութիւնը պատասխանատու բռնելով պարսիկներին կառաջարկեին իրանց միջամտութիւնը լուծելու թուրք պարսիկ վեճը: Պարսիկները դեռ զիջելու տրամադրութիւն ցոյց չէին տար, բայց Մեշեդի և Արդաբիլի կողմից ներս խուժող ռուս զորքերը զգաստացրին պարսիկներին հաշուի առնելու ռուսների ցանկութիւնը: -

Պաշտօնանկ եղաւ Թեհրանի դեսպանը Մուխտար? փաշան և եկաւ նրա տեղը Խոսրով բեյը և հանձնախումբ կազմուեց Արարատի խնդիրը լուծելու և ապստամբների ճնշելու:-

Օգոստ. յետոյ Պարսկաստ. և թուրքեր

Ռուսական զորքերը Պարսկաստան էին, որ Թաւրիզում ու Թեհրանում եղած բանակցութեան ընթացքում հետևեալը կորոշուի Արարատի զինուորական գործողութեանց մասին.

թուրքական Սալեհ փաշան է ընդհանուր հրամանատարը ապստամբներին ճնշելու գործում.

33 Անհասկանալի բառ:

34 Ինքնութիւնը պարզել չհաջողվեց:

35 Խոսքը անգլիական նշանավոր հետախույզ Լոուրենս Արաբացու մասին է:

Նա կուղարկէ պարսից հրամանատարի կողքին մի խորհրդական, որի միջոցով կյայտնուի Սալեհ փաշայի կարծիքը Արարատի շրջապատող պարսիկ զորքերի գործողութեանց և դասաւորմանց մասին:

Պարսիկ հրամանատարը կուղարկէ մի հրամանատար Սալեհ փաշայի կողքին, որ կյայտնէ կարծիքները պարսիկ հրամանատարութեան:

Զինուորական գործողութեանց յաջողութեանց տեսակետից անպատեհութիւն չի նկատուի, որ ժամանակաւոր կերպով թուրք կամ պարսիկ զորքերը մտնեն իրանց չպատկանող երկրների սահմանների մեջ:-

Այսպիսով ըստ էութեան Սալեհ փաշան կդառնար և պարսիկ զորքի հրամանատար և իրաւունք կունենար գործողութիւններ անել և պարսից հողերում Արարատի թիկունքում:-

Ռուսների համար քայլեր.

Պարսիկները ամեն ինչ զիջած էին, արդեօք ռուսների վախից, թէ՛ թուրքերի դժուար է ասել, թէ՛ ազատութիւն ձեռք բերելու կաշկայիների և լօտերի դեմը, որոնք մեծ յուզումների և անիշխանութեան էին մատնած երկրի հարաւը:

-Առանց կարողանալու այդ թնջուկը լուծելու, կարելի եզրակացնել եղած դեպքերից, որ օգոստոսից յետոյ պատահեցին Պարսկաստանում.

ա) ռուս զորքերը դուրս ելան պարսից հողերից և առևտրական դաշնագրութեան բանակցութիւնները վերսկսան.

բ) Մեշեդի և Ատրպատականի շրջաններում փախստական ճերմակ ռուսները հանձնուեցին բօլշևիկներին որոնք գնդակահարուեցան.

գ) փախստական հայերը, թաթարները չհանձնուեցին բայց սահմաններից փոխադրուեցին հարաւային Պարսկաստան.

դ) բոլոր մեր ընկերները որ կ'գտնուէին պաշտոնով և մասնաւոր կերպով Ատրպատականում հեռացուեցին Թաւրիզ և Թեհրան.

ե) ազդարարութիւն իջաւ մեզ չգործել բօլշևիկների դեմ և չխօսել իսկ նրանց դեմ.

Սրանք եղան Ռուսաստանի հանդէպ, այն ինչ տեսանելի էր հասարակութեան և մեզ համար:

Անգլիացիների դեմ քայլեր.-

Ասացի որ դաշղայիներ, լօտեր, բախտիարներ շարժման մեջ էին հարաւում. ոմանք կրացատրեին թէ այդ շարժմանց մեջ թուրքի և բօլշևիկների մատ կայ, ոմանք էլ թէ անգլիացիների, այդ շարժումները շատ լուրջ էին և կսպառնային իշխանութեան անկման. օգոստոսից յետոյ պարսիկները իրանց ամբողջ ոյժերը կենտրոնացրին այդ շրջանների վրայ:-

Նախ առանց տատանման հեռացրին ռուս, անգլիացի, թուրք համարող գործակալութեան մեջ կասկածուող անձանց, հայերից Մեսրոպ եպիսկոպոս իբր անգլոֆօթ. Պետրոս ? իբրև անգլոֆիլ. Տօլլես³⁶ ռուսներից, անգլիական գինուրական կցորդը, իսկ պարսիկներից բազմաթիւների որոնք նշանաւոր մարդիկ էին և բարձր դիրքերի տեր. Քեդրենդան, քէյ ուստօվանի և այլն: -Այս մաքրագործումը անելուց յետոյ են ամեն ձեռնարկուեց.

- բախտիարներին ճնշեցին, բախտիարների միջոցով Սարդար Ասադը (բախտիարի) իւր եղբայրներից գոհ տալով իւր հորեղբայրներին ճնշեց.

Ղաշխայիներ, Լօտեր ջարդուեցին և ոմանց ասելով 100.000 ընտանիք, ոմանց ասելով 60.000 տեղահանուեցին դեպի Սեյիստան, Մեշեդ, Թեհրան շրջաններ, հայկական տեղահանութեանց պատկերը կկրկնուէր պարսիկների ձեռք Լօտերի վերաբերմամբ:

36 Ինքնությունը պարզել չհաջողվեց:

Քրդերի վերաբերում և հայերի.-

Մեզ հետաքրքրական է ավելի թե՛ ինչ վերաբերմունքի փոփոխություն եղաւ քրդերի և մեր վերաբերմամբ.

Միանգամից ամեն յարաբերություն կտրուեցին մեր և պարսիկ պաշտօնական անձանց մեջ և ծածուկեն տեսակցություններ պատահական կլինեին:

- հեռացուեցին բոլոր կետերից հայերը և սահմանամերձ շրջանները հայերի երտնեկը դադարուեց:

Բացի մի քանի արքայներից այլ խստություն չկիրառուեց մեր դեմ, բայց քրդերի վերաբերմամբ ծայրահեղ միջոցներ ձեռնարկուեցին:-

Սըմկօն³⁷ շատ վատ դաւադրութեամբ կանչուեց և գնդակահարուեց.

Սուլջբուլախ-Սօմայ շրջանների և յետոյ Սալմաստի ու Արարատի վրայ հրամանատար նշանակուեց խան Նախիջևանսկին հեռացուելով բօլշևիկ սահմանից. նա յայտնի լինելով քրդօֆօբ և թրքօֆիլ իւր գործողությունները համաձայնեցրեց թուրքերին և Ջաֆար Դօլեն անուանական հրամանատար մնաց և ի վերջոյ հեռացուեց:

Սօմայ, Սուլջբուլախ, Սալմաստի ցեղերը զինաթափուեցին և ոմանք սահմանից հեռացուեցին:

- ջալալցի Խալըտ աղան հալածուեց, եղբայրը սպանուեց, որի պատճառով նա հարկադրուեց հեռանալ դեպի փոքր Արարատ, որով Արարատի թիկունքը բացուեց:-

Թիւրիմացութեան մեջ գցեց Իհասան Նուրին, թշնամացնելով Խալըտի հետ, իբր թուրքի գործակալի, որով Խալըտ աղան ելք չունենալով իրօք անձնատուր եղաւ թուրքերին, Արարատի թիկունքը ամբողջապէս բաց լինելով պարսիկ և թուրք զորքի առջև:

Օգոստ. Արարատը.

Օգոստոս ամսին Արարատի ապստամբները ավելի քան ուժեղ էին բոլոր ճակատներում, Բաշ Կարալաթեփեից անարգել կյառաջանային և իրանց ասպատակային խմբերը կտարածուեին մինչև Կարսի և Էրզրումի շրջանները. այս յաջողութիւնները գինովցուցած էին և ապստամբներին, որոնք կտրուած դրսի աշխարհից չզիտեին, թէ Արարատի ամբողջ գործը պիտի պայթեր թուրք - պարսիկ, թուրք - բօլշևիկ համաձայնութեամբ:

Խալըտ աղան, որ ապաստանած էր իր աշիրեթով Արարատ դուրս կվճռուի, և այսպիսով ոչ միայն Արարատի թիկունքը կզրկուեր մի պաշտպանից այլև Արարատի կռուողների թիվը կպակսեր. Արարատը անտեղեակ անցուդարձին և նոր փոփոխութեանց կշարունակեր հաւատ ունենալ պարսիկների վրայ:-

Այս հանկարծական փոփոխութիւնը յայտնելու համար գաղտնի ճանապարհով երեք անգամ փորձ արուեց մարդ ճամբել, միայն մի անգամեն յաջողեց Դաւիթին³⁸ և Մխօին³⁹ սպաների հետ հասնել Վելու մօտ և յայտնելու որ գգուշանան պարսիկներից, բարեկամութիւնը ունենան Խալըտ աղայի և յոյս չդնեն Պարսկաստանի վրայով մեր վրայ և յոյսերը կապին միայն իրանց և Հայաստանից եկողների վրայ, բայց արդեն ուշ էր, Խալըտ աղան թուրքերին անձնատուր էր եղած և քշուած Սուրմալու: Աշիրեթներին մեջ դիմադրութեան տատանում առաջ եկաւ, Քաջալան, Կօթան ցեղերը բոլորովին թշնամի դառան ապստամբներին իսկ մի խոշոր մասը չեզոքութեան ճամբան բռնեց, միայն Իհասան Նուրին, Բրօն, և հայերը այլևս ճամբայ

37 Իսմայիլ աղա Սըմկո (1887-1930) - քրդական շեքքաք ցեղի առաջնորդ՝ Ուրմիա քաղաքի մոտ, բազմիցս ապստամբել է իրանական իշխանությունների դեմ և համագործակցել թուրքերի հետ: Դեմ է եղել ՀՅԴ-ի և Հոյբունի և ընդհանրապէս՝ հայերի հետ համագործակցությանը: Մասնակցել է 1918 թ. Ատրպատականի հայերի և 1920 թ. ասորիների կտորածներին:

38 Ամենայն հավանականությամբ Դավիթ Փափազյանն է (1884 թ. Վան -1961 թ. Թեհրան):

39 Ամենայն հավանականությամբ Գրիգոր Մլիսիաբյանն է (1899 թ. Երևան - 1960 թ. Թեհրան):

չունենալով յուսահատ կռուի կողմնակից մնացին, յուսալով որ Հայաստանից գուցե օգնական ոյժեր պիտի գան:–

Հայերի օգնությունը

Արարատին յայտնի էր, որ Պարսկաստանի վրայով այլևս ոչ մի օգնություն չէին կարող տալ, գնում փամփուշտները կմնային. տանող չկար քրդերից իսկ, դրամ էլ չէինք կրնայ ձամբել և ձամբելն էլ անօգուտ էր քանի որ պաշարած էին. նամակ գրելն էլ վտանգաւոր:

Մնում էր օգնություն Հայաստանի մեր ընկերներին.

Վահանի Հայաստան ձամբած սուրհանդակները անարձագանք չմնացին. երեք խումբ փախստականներ եկան Արարատ. այդ փախստականները թուով 120–ից անելի քրդական բոլոր ցեղերի կողմից պաշտպանուեցին և ոչ ոք չթալանուեց և չսպանուեց և նոյնիսկ ապստամբներին թշնամի բոլոր ցեղերը ձանապարհ տուին հասնելու Վահանի և Իհսանի մօտը.

Բայց այդ փախստականների փոքր մասն էր գինում, փամփուշտ չունեին, ապա ուրեմն նրանք փաստորեն բեռ էին Արարատի վրայ.

Երկրորդ ամենաէականը այդ փախստականները եկած էին կարծես իրանց կաշին ազատելու բօլշևիկներից և ոչ թէ օգնելու ապստամբներին, նրանք իրարու գաղտնիք դուրս տալով, կայարգուեր շատերը ձամբում են բօլշևիկների կողմից անելի կազմալուծելու Արարատը քան կազմակերպելու, ուստի Վահանը գինաթափ կանէ և դուրս կարտաքսէ Արարատից ոչ թէ Հայաստանի այլ Պարսկաստանի ուղղութեամբ, որոնք կբերուն գերում Թարիզ և այնտեղից դեպի հարաւային Պարսկաստան կբշուին:

Ահա այս դրութեան մեջն է որ Օգոստոսի վերջին թուրքերը իրանց գորախումները կատարելուց յետոյ կսկսեն գործողությունները.

Այբա լեռները որ պարսիկները բռնած էին, հանկարծ հրաման կառնեն յետ քաշուիլ, հոն մնացած Սաքան ցեղը, որ հաց կմատակարար Արարատին կմնայ մենակ: Այդ շրջանի վրայով էր, որ մեր հանձնառութեամբ պիտի տանեին 4000–5000 քիլ. Արարատ, որի փոխարժեքը պիտի վճարեինք, երբ ստացուեր Արարատից ստացական: Պարսիկները և քրդերը մի մասը կատարած էին իրանց հանձնառութեանց, որ անկումը եղաւ և մենք չկատարեցինք մեր վճարը:–

Թուրքերը պատրուակ բռնելով որ այդ շրջանը կմատակարէ Արարատին, երկու գունդ առաջ կշարժէ Վանից, մինը Քոտուրի, միւսը Բայազետի վրայով և կմտնի պարսից հողերը, կբռնէ Այբա լեռները, որ պարսիկները թողած էին, Սաքան ցեղը կդիմադրէ և կբնաջնջուի, թիկունքից ստանալով և պարսիկների հարուածները:

Թուրք զորքը սեպտեմբերի սկզբին կհասնի Մակալ արուարձանները, առանց պարսիկ զորքին պատահելու, հող պահակ կդնէ և Խալըղ բեկի հողերը կմտնի որ պարպած էր նախապես, և կբռնէ մի կողմից Տամբաղը, միւս կողմից կմտնի փոքր Մասիսի և պարսից զորքի մեջը: – Պարսիկ զորքը անելի յետ կքաշուի:

Նոյն ժամանակամիջոցում երբ թուրք զորքերը մտած կլինեն Արարատի թիկունքը հարձակում կսկսի Կաբախ Թեփեից, ամուր կբռնուի Օռգովը և Մասիսի ռուսական երեսը կմաքրուի ապստամբներից և թուրքերը կհասնեն երկու Մասիսի արանքը.

Բայազետի կողմից ևս ճշուում կլինի և քրդերը կհաւաքուին ձաւիճների և Արարատի մեջը. երբ կտեսնեն որ իրանց թիկունքը բացում է և պարսից հողերով է, որ կիջնեն իրանց վրայ, կորոշեն, որ իրանք ևս իրանց հերթին թիկունքը անցնին թուրքերին, Վահանը հանձն կառնէ անցնել նորից Սուրմալու, հոն եթէ գտան տրամադիր ոյժեր քրդերից պիտի նրանցով հարձակեր երկու Մասիսների մեջը և Այբա հաստատում թուրքերին վրայ հարձակիր, նա կվերցնէ իւր հետ հայերին և կերթայ.

Նրա գնալու միւս օրը Իհսանը անձնատուր կլինի պարսիկներին ձեղքելով թուրքական զորքը

Իսկ Վահանը անտեղեակ կանցնի Սուրմալու ոյժեր չի գտնի, կանցնի Հայաստան,

կհաւաքէ սասունցիներից մի քանի տասնեակ, կվերադառնայ ուշ, երբ Արարատի ապստամբութիւնը խեղդուած էր և ոչ մեկին չի պատահելով կանցնի պարսից մաւր և ձերբակալուելով, յետոյ կազատուեն:-

Հոկտեմբեր

-Արարատում հոկտեմբերից կմնայ Բրօն, Ֆարգանդան⁴⁰, Ռասուլը, որոնք Իհսանի անձնատուութիւնից յետոյ կշարունակեն մնալ Արարատում, դուրս քշելով կին երեխաներ դեպի զանազան կողմեր Արարատից դուրս, նրանք կսպասեն, որ Վասպուրականի կամ Սիրիայի կողմից պիտի ապստամբութիւն ծագի, դրան համոզուած Ռասուլը 180 հոգով կ'գայ մինչև Մուշի, Ախլաթի սահմանները ասպատակելով. հոկտեմբերին ձին դրուած լինելով Մասիսում, զօրքերը իջած են կատարներից, այդ գիտնալով Ռասուլ կվերադառնայ Արարատ, ուր կ'գտնի Բրօն և Ֆարգանդային: Նորից կորոշեն շարունակել կռիվը և մնալ Արարատում: Ցաւօք սրտի նոյն ժամանակում որ Վահանը վերադառցած է լինում Արարատ, չի պատահի նոցա և հոկտեմբերին նա կհասնի Արարատից Պարսկաստան:-

Արարատը այլևս սպառնական չէր թուրքերի համար, որովհետև նրա գլխաւոր կետերը իրա ձեռքին էր, բայց թէ Արարատը ամբողջապէս չէր նւաճուած, նրա մեջ էր գլխաւոր սինըր ապստամբութեան Բրօն, որ կանհանգստացներ թէ թուրքերին թէ պարսիկներին:

Քրդական շարժման նոր փուլը Պարսկաստանում:- 1931-32 թուերին

Վիճակը

1930-ի հոկտեմբերին Տաճկաց զօրքերը գրաւած էին պարսկական հողերը Արարատի շուրջը և բոլոր անցքերին պահակներ դնելով: Ժողովրդի տեղահանութիւն կատարուած էր մասնակի կերպով. իսկ պարսկական հողերից ամբողջ քրդութիւնը տեղահանուած էր դեպի պարսից գաւառների ներսերը:

Արարատում մնացել էին Բրօն և Ֆարգանդայի գլխաւորութեամբ մի քանի հարիւր հոգի ապստամբներ, իրանց դեմ ունենալով երկու պետութեան թշնամութիւնը և իրանց ցեղակից դաւաճան ցեղերը, որ մինչ օրս էլ թուրք իշխանութիւնը չէ տեղահանած:

Նոյնը և Զիլան դերեում, ուր ապստամբութեան կողմնակից քիւրդերը փչացուած կամ տեղահանուած էին և մնացել էր շրջանը ցանցառ ազգաբնակչութեան ձեռքին, թաքնուած լեռներում:-

Այս դրութիւնը ընդհանուր հակազդեցութիւն պիտի առաջացներ մեր և Հօյբունի դեմը, և յիրաւ մանաւանդ Հօյբունի դեմը.

Այդ հակազդեցութիւնը կասեցնելու համար Արարատի և Զիլանի մեջը ոչ մի հնարավորութիւն չկար, որովհետև թէ վտանգաւոր էր և թէ անհնարին կապնուել նրանց հետ և մարդ ճամբել լեռներ ապաստանածների մօտ, բայց մեր առաջ պատեհութիւն կար, նորից վաստակելու ապստամբների վստահութիւնը և հաւատը:-

40 Ֆերզենդէ բեյ (ծննդ. թ. անհ. - 1939) - հասանալ ցեղից, մասնակցել է շեյխ Սայիդի ապստամբութեանը, որի պարտութիւնից հետո անցել է Իրան՝ Իսմայիլ աղա Սըմկոյի մոտ: 1927-ին վերադարձել է Թուրքիա և մասնակցել Արարատի ապստամբութեանը: Վերջինիս պարտութիւնից հետո նորից անցել է Իրան և 1931 թ. մասնակցել Մակուի քրդական ապստամբութեանը, որի ժամանակ վիրավորվել է և ձերբակալվել իրանական անվտանգութեան ուժերի կողմից: Մահացել է իրանական բանտում 1939 թ.: Ըստ որոշ վարկածների՝ նրան թունակաւորել են:

Բանտարկութիւններ և արքորներ.

ԱՐՄԻՎ

Լեռներ ապաստանածների մեծ մասը և բարեկամները կամ արքորուած էին Պարսկաստան, կամ բանտերումն էին, անօգնական և թշուառ վիճակի մեջ և արհարամարած բոլորի կողմից. միայն մեր ընկերներն էին, որ կապ կպահեն նրանց հետ հանձն առնելով վտանգը, միջամտելով նոցա մասին և երբեմն նիւթապես օգնելով: Նոյն իսկ Բրօի, Ֆարզանդայի ընտանիքները մեր միջոցով կլնանաւուին և այս վերաբերմունքը պատճառ կդառնայ, որ մեր կոտորած վարկը նորից շիտկուի և քրդերի մեջ ընդհանուր համարում կայացուի, որ միակ անկեղծ բարեկամը «դաշնակներն» են, և եթէ չեն կարողացել փրկել Արարատը ռազմամթերք և դաշնակցական բանակ ուղարկելով, ուրեմն դա անհնարին է եղած պարսիկների և բօլշևիկների պատճառով:-

Պարսկաստան ապաստանածները, որ մի քանի վայրերում սառած կերնային մեզնից, նորից սկսեցին լսել մեր ներկայացուցիչների ներշնչումներին:-

Վասպուրական – Արարատ:

– Արդէն օգոստոսի վերջերին յայտնի լինելով, որ ստեղծած պայմաններում կարող է Արարատը կործանուել, սեպտեմբերի և հոկտեմբերի մեջ խորհրդակցութիւն եղաւ Թեհրանում՝ մեր գործող ընկերների հետ, ի նկատի առնուելով Իսաան Նուրիի, շեյխ Աբդալ Կադրիի և միւսների կարծիքները, որոնք բանտերումն էին:

–Այդ ընկերներն էին Ռոբ, Վարոս, Հայկակ, Հայրիկ⁴¹, Ստեփանոս, Գասպար, Լաերտ և այլն –

Այս խորհրդակցութեանց եզրակացութիւնները, որ 1931-ին Բիւրօն որդեգրեց հետևեալներն էին:

Արարատի հետ կապը չկտրել և ապստամբների ընտանիքներին օգնել և ջանալ որ արքորականները վերադառնան իրանց վայրերը.

Երբ վստահելի կորիզ ստեղծուի Արարատում, միացնել մերոնցից և յատկացնել 3000\$ բիւտջէ:

Մինարեթը և Ուտերն⁴² հենարան դառնցնելով կազմակերպել տեղի քրդերին:

Ներս ուղարկել դէպի Վասպուրական քարոզիչներ և պարտիզանական խմբեր.

Ներս ուղարկել դէպի Հաքարի սուրհանդակներ և քարոզիչներ և կապուել ինչպես Իրաքում Լևոնի⁴³, նոյնպես Հաքարու քրդերի հետ.

Արարատի շրջանի վրայ լիազոր կազմակերպիչ կնշանակուի Սուրոն⁴⁴, իսկ Հաքարու և Վասպուրականի վարիչը Հաֆըզը⁴⁵, իւրաքանչիւր շրջանին 3000\$ ական բիւտջէ հատկացնելով:-

[Երկու անընթ.բառ] Մոկաց բեկի սպանութիւնը

–Հաֆըզ իրան գործակից ընկերների միջոցով կարողացել էր սահմանամերձ վայրերի քրդերի վստահութիւնը առնել և Վասպուրականի շրջանի կազմակերպման համար ձեռք բերել Մոկաց ընկերներին, որ ապաստանած էին Պարսկաստան: Սրանք

Ժ (ԺԶ) քարի. թիվ 2 (62), ամբիլ-հունիս, 2018

ՎԿՎ համահայկական հանդէս

41 Վարոսը թերևս Վարոս Բաբայանն է, Հայկակը՝ Հայկակ Կոտոյանը, իսկ Հայրիկը՝ Հայրապետ Պանիրյանը: Մյուսների ինքնությունը պարզել չհաջողվեց:

42 ՀՅԳ կուսակցական շրջանի անհասկանալի անվանում:

43 Լևոն Շադոյան:

44 Ինքնությունը պարզել չհաջողվեց:

45 Ինքնությունը պարզել չհաջողվեց:

ոտի էին և կաշխատեին միացնել քրդերի և յեղափոխութեան մղել. այդ վտանգը կանխելու համար տաճիկներին կյաջողի գտնել վարձու քրդերի, և դաւադրութեամբ կսպանեն երկու եղբայրներին: Հաֆըզի առաջին ձեռք բերած յաջողութիւնը բնի մեջ կլխեղդուի այդ սպանութիւններով: Բայց նա կյաջողի գտնել մի երրորդին Մոկաց բեկերին նոյնպէս Տարագրին⁴⁶, որին կյաջողի մի խումբ միացնել քրդերից և մեր երկու ընկերներից և ճամբել դեպի Վասպուրական: Այդ խմբի նպատակը պիտի լինէր.–

ա) շրջել Վասպուրականի գաւառները և քարոզել մեր նպատակները և կազմակերպել նոցա.

բ) գտնել վտահելի տարրերը փախստականներից և նրանցով Վասպուրականի գաւառների մեջ հենարաններ ստեղծել:

գ) կապել ապստամբ կորիզները իրարու հետ և կապել նրանց մի կողմից Պարսկաստանի, միւս կողմից Իրաքի հետ.

դ) ճանապարհներ գտնել մթերքի հայթայթման:–

Վասպուրական:

– 1931–ին Տարագրի խումբը անցնելով Վասպուրական լիովին իր վրայ դրած պարտականութիւնը կկատարէ: Նա կշրջագայէ Գեւաւառ, Հայոց ձոր, Գեւաւաշ, Նորդուզ, Վերին Շատախ, Մոկս, Խասխետ, Կառկառ, Կարձկան, Կիցան գաւառները, որտեղերը կլինի անձամբ իւրաքանչիւր շրջանում գտնելով համակիր քրդերի և նրանցից կազմելով կորիզներ և տալով գործունեութեան ծրագիր, խաղաղ պատրաստուելու ապստամբութեան համար:

– Իսկ Կարկառ, Մոկս գաւառների փախստականներին կհամախմբէ Ու–ի⁴⁷ շուրջը և նրան կդառնցնէ կորիզը զինական ոյժերի ինչպէս երբեմն կառկասն էր Իշխանի օրոք: Վասպուրականի աշխատանքի մանրամասնութիւնները լինելով Տարագրի զեկուցման մեջ, նրանց հանած եզրակացութիւնները հետևեալը պիտի համարել:–

- ընդհանուր ատելութիւն կայ հանդէպ թուրքերը և մեծ հաւատ և համակրութիւն դեպի հայերը:–
- ժողովուրդը քայքայուած է, անզեն և կորստեան ճամբու վրայ է կանգնած:
- երկիրը ամայի և ոչ մի վերաշինութեան նշան.
- դիւրութեամբ կարելի է կազմակերպել ժողովրդեան և մեր ցանկացած ուղղութեամբ վարել.
- նա յուսահատութիւնից պատրաստ է ամեն քայլ առնել թուրքի դեմ, միայն թէ կարիք ունի կազմակերպելի⁴⁸, զենքի և դրամի: –
- որ կան գաւառներում ինչպէս կազմակերպական, նոյնպէս ռազմական կորիզներ, որոնց շարժման մեջ դնելը հնար է եթէ դրական օգնութիւն լինի:–

7) Ներքին կազմակերպութիւնը կսպասէ մեզնից –

ա) բարիացակամութիւնը վաստակել մեր պետութեան որ հնար լինի ոյժ ձեռք բերելու.

բ) մարդ, զենք, և դրամ:–

– Տարագիրը այս անմիջական արդիւնքները ձեռք բերելուց յետոյ, կջանայ կապուել Բօհտանի, Հաքարի քրդերի հետ մի կողմից, իսկ միւս կողմից Խիզանի և Բիթլիսի վրայով Մոտկանի հետ:

46 Ինքնությունը պարզել չհաջողվեց:

47 Հետախույզի ծածկագրված անուն է: Ինքնությունը պարզել չհաջողվեց:

48 Կազմակերպիչների:

-Սուրհանդակներ կուղարկէ կպարզէ իւր մտքերը, հաւաստիացումներ կառնէ բայց առանց դրական եզրակացութեան գալու և գործը իւր հունի մեջ գցելու, հարկադրուած կլինի ձգել և հեռանալ:

-Նախ քան հեռանալը կկարողանայ կապը ստեղծել Վասպուրականի և Պարսկաստանի մեջ, բայց Իրաքի ուղղութեամբ չյաջողի:-

Նա կվերադառնայ Պարսկաստան, որպեսզի խուսափի կռիվներից, քանի որ կառավարութիւնը ծանօթ էր նրա ներկայութեան և ամեն խստութիւն ձեռք էր առած, մի քանի թեթև կռիւներ տարլլու վերջը, մանաւանդ որ ձիւնն էլ կիջներ և կծածկեր երկիրը կհեռանայ Պարսկաստան Հաֆըզին զեկուցանելու և ոյժեր ներս տանելու համար և ապահով կհասնի ձմռանը -

1932-ը Վասպուրականում:-

Այստեղ Ռուբենի ձեռագիրն ընդհատվում է:

Summary

Rouben

KURDISH CASE IN PERSIA

Prepared by Aram S. Saiyan

The rebellion of Ararat in 1926-1930 isn't sufficiently studied both in world, Soviet and especially Armenian historical science. One of the main reasons for this is the lack of sources, as well as, the lack of Armenian translation of studies done in foreign languages, especially in Turkish and Kurdish languages.

All this is supplemented by a spacious letter from the prominent figure of the Armenian liberation war, Minister of Defense and Military Forces of the First Republic Rouben (Minas Ter-Minasion). The note entitled "Kurdish Case in Persia" is preserved in the 64th file's first list of 1048 fund in Armenian National Archive: it's a detailed report consisting of 34 pages written in the exercise-book and is addressed to ARF's Bureau. In it Rouben speaks about his special mission carried out in Persia for supporting Ararat's rebellion. In report the events that took place in spring of 1930, i.e. the process of organizing the Kurdish tribes against the Turks, the military proceedings, as well as, the rebellion's defeat and the clashes taking place afterwards in some provinces of West Armenia are described in detail.

Резюме

Рубен

КУРДСКОЕ ДЕЛО В ПЕРСИИ

Подготовил Арам С. Саиян

История Араратского восстания 1926-1930 гг. полностью не изучена как всемирной, так и советской и особенно армянской исторической наукой. Главнейшая причина этого – нехватка источников, а также отсутствие армянских переводов

исследований на других языках, особенно на турецком и на курдском.

Все это частично компенсируется изучением пространного доклада выдающегося деятеля армянской освободительной борьбы, военного министра и министра внутренних дел Первой Республики Рубена (Минаса Тер-Минасяна). Доклад под названием “Курдское дело в Персии”, составляющий 64-ое дело первого списка фонда 1048 Национального архива Армении, изложенный на 34-х листах школьной тетради - подробный отчет, направленный в Верховный орган (Бюро) АРФ. В ней Рубен говорит о своей секретной миссии в Персии с целью оказания поддержки Араратскому восстанию.

В докладе подробно изложены события, происшедшие весной-летом 1930 г. – консолидация усилий курдских племен против турок, ход боевых действий, а также поражение восстания, а после этого - столкновения в ряде провинций Западной Армении.